

Ե Տ Ա Ր Ա Ր

Գ Ի Ս Ա Կ Ա
Տ Ի Ւ Ր Կ Ա Կ Ա
Գ Ր Ա Դ Ա Ր Ա


Վ. Ա Ջ Ա Շ Ա Խ Ա

Կ Ա Տ Ա Լ Ի Տ Ի Կ
Յ Ե Ր Ե Վ Ո Ւ Յ Թ Ն Ե Ր

1935

Խ 68 — 69

Պ Ե Տ Ա Կ Ա Հ Ի Ր Ա Ր Ա Ր Ա Ր
Է Տ Ր Ե Վ Ա Խ



Գ. Ա. Զ. Ա. Տ. Ա. Հ.



ԿԱՏԱԼՈՒԺԻԿ ՅԵՐԵՎԱՆԻՑԹՆԵՐ

Հ 23408



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՎՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1935

Պատասխանատու խմբագիր Ն. Խոմիչյան
Յելիս. խմբագիր Հ. Տիր-Գևորգյան

Գլավիկ 428
Հրատարակ. 3065
Տիրամ 2000

Համաձնված և արտադրության 27/VIII 35թ.
Առողջապահ և ապելու 1/X — 35թ.
Ստանդարտ Ա5 — 148x210. Պատվիր № 4077
Տիպոգրաֆիա առ 1902 թ. ԱԿԲՊ Ռոտով նա-Դոնու.

Բնության մեջ — ամենապարզ նյութերի ամենաաննշան և
աչքով անտեսանելի մասնիկներից սկսած մինչև հսկայական
մեծության զանգվածները, միանգամայն անփոփոխ թվացող
առարկաներից մինչև աշխարհի ամենաբարդ պրոդուկտի՝ մարդու
և նրա ուղեղի մասնիկները, նյութի փոփոխվելու ամենապարզ
ձևերից մինչև մարդու մտածողությունը — այս բոլորը նյութի —
մատերիալի — անընդհատ շարժումն ե, անընդհատ փոփոխու-
թյունների յենթարկվելու ե, վորը կատարվում ե բնության մեջ
միշտ, ամենուրեք և անընդհատ, տարրեր արագությամբ, տար-
րեր ուղղություններով և տարրեր արտահայտություններով ե
հանդես դավիս Այդ անընդհատ փոփոխությունների՝ շարժման
շնորհիվ ե, վոր գրանիտի, բազալտի կամ լեռնային այլ ապառ-
ներից կազմված ահոելի ժայռերը քայլայվում, փշրվում են,
խիճ ու ափազ են գառնում, հողերն արգավանդ կամ ուժաս-
պառ, անպետք են գառնում։ Այդ փոփոխությունների շնորհիվ
ե, վոր համեմատաբար սակավաթիվ ամենապարզ նյութերից
կազմակերպվում են աշխարհի բոլոր բույսերն ու կենդանիներն
իրենց ձևերի, գույնների ու բազմաթիվ այլ հատկությունների
դարմանալի բազմազանությամբ։ Վերջապես այդ փոփոխու-
թյունների շնորհիվ ե, վոր այդ անթիվ — անհամար բազմազան
բույսերն ու կենդանիները, հանգերն ու քարատեսակները քայ-
լայինելով վերջիվերջո վեր են ածվում դարձյալ միայն շատ
սակավաթիվ պարզ նյութերի՝ մոխրի — հողի։ Այդ անընդհատ
փոփոխությունների միջոցով կատարվում ե նյութերի հավի-
տենական շրջապտույաը՝ բնության մեջ։

Դեռևս ամենահին ժամանակներում զիտնականներից շատերն
ընդունում եյին, վոր յերկրի վրա յեղած նյութերը — մարմին-

ները — բոլորն անընդհատ փոփոխվում, «հոսում են», վոր անփոփի վոչինչ չկա յերկրի վրա:

Մեր բնության կյանքը նյութերի հավիտենական շարժումների, իսկ շարժումների արտահայտվելու, — յերևան գալու ձևներ. նյութերն իմացվում — ճանաչվում են միայն իրենց շարժման մեջ:

Մեր շուրջն ամենուրեք տարածված անթիվ-անհամար մարմինների, բուսական ու կենդանական որգանիզմների տեսակների, ձևերի, գույների, զանազան պրոդուկտների գեղեցիկ և զարմանալի բազմազանությունն ստացվել ե քիչ քանիակով ամենապարզ նյութերի (տարրերի) տարբեր կոմբինացիաներից (միացումներից). Այդ նյութերից շատ շատերը ներկայումս կարողանում ե պատրաստել քիմիկուն իր լաբորատորիայում կամ գործանոցում, դրա համար ոգտվելով բնության իսկ կողմից տրամադրվող զենքերից — բնության ռուժերից և նրա նյութերից: Բնության զենքերին տիրապետելն այնքան ավելի արագ ու հաջող ե կատարվում, վորքան ավելի յե ճանաչում մարդն այդ ռուժերն ու նյութերը:

Շարժման պրոցեսում (փոփոխվելիս) նյութերը հանդես են գալիս տարրեր ձևերով, գույներով և այլ բազմաթիվ հատկություններով: Այնպես, ինչպես չկա նյութ՝ առանց շարժման, այդպես ել հակառակը — չկա շարժում՝ առանց նյութի:

Բնությունը — նյութերն ու բնական յերեսույթները — ուսումնասիրող գիտություններից մեկը հանդիսանում ե քիմիան:

Քիմիան ուսումնասիրում ե բնության մեջ տարածված ամենապարզ նյութերը (տարրերը), վորոնցից կազմված են աշխարհի բոլոր մարմինները. այդ պարզ նյութերի հատկությունները, նրանց այն խորը վորակական փոփոխությունները, վորոնց հետևանքով գոյանում են նոր, վորակապես բոլորովին այլ նյութեր, և այն յերեսույթները, վորոնք տեղի յեն ունենում այդ փոփոխությունների ժամանակ: Քիմիական շատ փոփոխություններ — յերեսույթներ — հայտնի յեն բոլորին, որինակ՝ փայտի կամ ածխի այրման յերեսույթը քիմիական յերեսույթ ե, վորով հետև վերցրած փայտը կամ ածուխը փոփոխության յենթարկվելով (այրվելով), տալիս ե բոլորովին այլ հատկություններ ունեցող նոր նյութեր՝ մոխրի և գագեր: Կրաքարն (CaCO_3) այրելիս բարձր ջերմությունից քայլայվելով վեր ե ածվում ածխաթթվական գաղի (CO_3) և չհանդած կրի (CaO): Նավթն այրելիս գոյանում են՝ ջուր (գոլորշի, վորից քրանում ե) լամպի ապակին), և ածխաթթու գաղ (CO_2): Սնդիկը ծծումբի

հետ արորելիս գոյանում և ծծմբական մնդիկ — գորշ գույնի մի փոշի: Բերած որինակների մեջ նոր գոյացած նյութերը (մոխիր, CO₂, CaO, ջուր, փոշի) իրենց հատկություններով նման չեն և բոլորովին տարբերվում են սկզբնապես վերցրած նյութերից (փայտ, ածուխ, կրաքար, նավթ, մնդիկ, ծծումբ):

Քիմիական փոփոխությունների — ռեակցիաների մեջ մասը շատ բարդ է: Այդ պատճառով ել նրանցից շատերը մինչ այժմ ել կամ լրիվ պարզված չեն, կամ յերկար ժամանակ մնում ելին չողարգված: Քիմիական մի շաբթ յերկույթներ մարդուն ծանոթ են դեռ շատ փաղ ժամանակներից, յերբ գոյություն չունելին վոչ միայն ներկայիս լարորատորիաներն ու գործարանային արդյունաբերությունը, այլև չկային գիրն ու գրականությունը: Առանձին քիմիական յերեսույթներ — տեխնոլոգիական (մշակման) պրոցեսներ — մարդը կատարում եր, որինակ, հանգերից մետաղներ ստանալու և այդ մետաղները մշակելու ժամանակ, նրանցից ձույլեր պատրաստելիս, սապոն, ապակի, ներկեր, վորոշ գեղանյութեր, քացախ, գինի և այլ նյութեր պատրաստելիս Սակայն այդ բոլոր յերեսույթ — պրոցեսներին մարդը ծանոթացել և պատճառաբար, շատ անգամներ կրկնվող դիտողությունների հիման վրա: Բնական այս կամ այն յերեսույթին ծանոթ առանձին անձնավորությունները — ժամանակի «գիտնականներ» — պատճանում եյին գերիշխող դասակարգերին, քուրմիրի դասին, փորոնք իրենց «գիտությունն» — արհեստն ոգտագործում եյին իրենց դասակարգի շահերի, իրենց գերիշխանությունը շահագործվողների վրա ամուր պահպանելու համար և իրենց ունեցած գիտելիքները, փորձը բերանացի հաղորդում եյին սերնդեւերունդ — ներդ շրջանակներում:

Սակայն հին ժամանակներում մարդկանց հայտնի քիմիական տեխնոլոգիական պրոցեսները մնում եյին անհասկանալի, անբացատրելի: Չեյին ընդհանրացվում նման յերեսույթները: Այդ հնարավոր ել չեր այն ժամանակ: Այդ պատճառով ել ժամանակակից իմաստով՝ քիմիական գիտություն հին ժամանակներում գոյություն չուներ: Գիտության և տեխնիկայի մյուս ճյուղերի զարգացման հետ միասին ժամանակի ընթացքում առաջ գնաց նաև քիմիայի զարգացումը, մամնավորապես Դալտոնի, Լավուագեյի և այլ քիմիկոսների (վորոնց մասին խոսք կլինի քիչ հետո) աշխատությունների շնորհիվ: Թե վորքան առաջ և գնացել քիմիայի զարգացումը և թե ինչպիսի մեծ դեր է խաղում քիմիան ներկայումս մարդկային կյանքում — այդ մենք կտեսնենք ստորև:

Քիմիական տարբեր ռեակցիաներ զանազան նյութերի հետ—կատարվում են ավելի կամ պակաս հեշտությամբ։ Այդ կախված ե՝ ա) ռեակցիայի մեջ մտնող նյութերի բնույթից, քիմիական հատկություններից և բ) այն պայմաններից, վորոնց մեջ տեղի յե ունեցել ռեակցիան։

Շատ դեպքերում նյութերի հետ քիմիական փոփոխություն կատարվելու համար բավական ե լինում, վոր՝

1. Այդ նյութերը հաստատում կերպով հպվեն. կամ հանդիպեն իրար։ Որինակ՝ ողի ազուր քայլայվում ե նույնիսկ մի թեթև հպումից. սնդիկը (Hg) և ծծումքն (S) իրար հետ քիմիական ռեակցիայի մեջ են մատում (միանում են), յեթե նրանք իրար հետ խառնվում, տրորվում են։ Սակայն այսպիսի հետությամբ քիմիական ռեակցիաները քիչ են կատարվում։ Մեծ մասամբ անհրաժեշտ են լինում նաև հետեյալ պայմանները (նրանցից մեկը կամ մի քանիսը միաժամանակ)։

2. Վերցրած նյութերը տաքացվեն ռեակցիայի միայն սկզբում (որինակ յերկաթը և ծծումքն իրար միացնելիս, փայտն այրելիս), կամ մինչև վերջ։

Կարելի յե ասել, վոր քիմիական բոլոր ռեակցիաները կատարվում են միայն ջերմային վորոշ պայմաններում։ Ջերմության ազդեցության կարևորությունը յերեսում ե թեկուզ այն բանից, վոր ընդհանրապես ասած՝ ռեակցիաների մեծ մասի արագությունը մոտավորապես կրկնապատկվում ե, յերբ ռեակցիայի մեջ մտնող նյութերի ջերմությունը բարձրացվում է 10 աստիճանով։ Յեթե վորեւ ռեակցիայի արագությունը 0° ժամանակ ընդունենք 1, ապա նույն ռեակցիայի արագությունը 100 ժամանակ կլինի 2, 200 ժամանակ՝ 4, 300 ժամանակ՝ 8 և այլն։

Ջրածին գազը (H) թթվածին (O) գազի հետ միանալով, գոյացնում ե ջուր (H_2O)։ Աակայն ջրածնի և թթվածնի միացման համար պահանջվում ե տաքացնել, հակառակ դեպքում նրանց միացումը տեղի չի ունենում գործնականորեն։ Սովորական ջերմաստիճանում H և O այնքան քիչ քանակով են միանում, վոր նույնիսկ տամայակ տարիների ընթացքում այդ կերպ գոյացած ջրի բանակությունը վորեւ կերպ հայտնագործել հնարավոր չե։ Արդեն 500° ժամանակ կարելի յե հայտնագործել ջրի գոյացումը։ Սակայն յեթե H և O խառնուրդին բոց մոտեցնենք, այդ յերկու գագերն իրար են միանում վայրկենաբար, պայթյունով, և ջուրը գոյանում ե միանդամից։ Ջրային

գոլորշիները 1000^0 -ից բարձր տաքացնելու դեպքում ջուրը (H_2O) նորից տարրալուծվում է իր բաղադրիչ մասերին՝ $H\cdot H$ և $O\cdot O$ -ին նւրեմն ջրի և գոյացման, և գոյություն ունենալու համար կա Ներմային վորոշ սահմանն Այդ նույնը վերաբերում է նաև բոլոր այլ նյութերին Քիմիական ամեն մի ռեակցիա ունի Ներմային վորոշ բարձր կետ (մաքսիմում), վորից այն կողմը տեղի յեւ ունենալու հետագարծ ռեակցիա, այսինքն գոյացած նյութը նորից քայլայվում է իր բաղադրիչ մասերին:

3. Ելեկտրական հոսանքը շատ դեպքերում ազդում է ջերմության նման, որինակ՝ ջուրը տարրալուծում է $H\cdot H$ և $O\cdot O$ -ին Շատ նյութեր մետաղների նման ընդունակ են ելեկտրական հոսանքն անցկացնելու (հաղորդելու). այդ նյութերը (ելեկտրոլիտներ) ելեկտրական հոսանքի ազդեցությունից քայլայվում են (որ կերակրի աղը $NaCl$, պղնձի արջասպը՝ $CuSO_4$ և այլն): Նման քայլայումը կոչվում է ելեկտրոլիզ։ Ելեկտրոլիզի շնորհիվ եր, վոր ժամանակին հայտնագործվեցին մինչ այդ անհայտ մի քանի տարրեր (կալիում — K , նատրիում — Na):

Ելեկտրականությունը, բացի նյութերը քայլայելուց, կարող է նաև քիմիական միացում առաջացնել (սինթեզ), որինակ՝ թթվածինը ելեկտրականության ազդեցությունը դառնում է սպոն (O_3):

4. Լույսը նույնպես նպաստում է շատ նյութերի քայլայման, լուսանկարչական թղթերի և տպակիների վրա քսված քիմիական աղերը լույսի ազդեցությունից քայլայվելով, թղթերի և տպակիների վրա տալիս են լույս անդրագարձնող առարկայի կամ մարդու պատկերը։ Մթության մեջ այդ աղերը փոփոխության չեն յենթարկվում։ Ընդհանակառակը, շատ դեպքերում լույսի ազդեցության տակ կատարվում է տարրերի միացում, որինակ՝ քլոր (Cl) գազը միանում է մի շարք այլ նյութերի հետ:

5. Ճնշումը նույնպես ազդում է քիմիական ռեակցիաների արագության վրա։

Քիմիական բոլոր միացման ռեակցիաները կատարվում են այն դեպքում միայն, յերբ ռեակցիայի մեջ մտնող նյութերը սերտ շիմման մեջ են գտնվում։ Այդ պատճառով քիմիական ռեակցիաներն ավելի հեշտությամբ տեղի յեն ունենում դազային վիճակում, իրար մեջ լուծվող հեղուկների դեպքում և այլն։ Իրար մեջ լուծվող հեղուկները թափահարելով մեծանում են նրանց մակերեսը, ափելի մեծ թվով մասնիկներ են շփում իրար, և արագանում են ռեակցիան Վորապեսզի պինդ նյութերի հետ ռեակցիան արագ և հեշտ կատարվի, անհրաժեշտ ե, վոր

ուեակցիայի մեջ մտցվող պինդ նյութերը մանրացրած և իրար հետ լավ խառնված լինեն:

Վերը մենք ասացինք, վորը քիմիական տարբեր ուեակցիաներ կատարվում են ավելի կամ պակաս հեշտությամբ, և վոր այդ կախված ե յերկու պատճառոից՝ ա) սեակցիայի մեջ մտնող նյութերի բնույթից — քիմիական հատկություններից և բ) ուեակցիայի պայմաններից: Ուեակցիայի պայմանների մասին մենք արդեն գիտենք: Այժմ դառնանք առաջին պատճառին՝ նյութերի քիմիական հատկություններին:

Բանն այն ե, վոր գոյություն ունեցող բոլոր ամենապարզ նյութերը (տարրեր), վորքան քիչ քանակով ել վոր լինեն նրանք, ունեն իրար վորոշ ուժով ձգելու հատկություն:

Քիմիական ուեակցիաների ժամանակ գոյացող նոր նյութերի կազմվելու պատճառն ահա այդ ձգողական ուժն ե, վորը կոչվում ե քիմիական խնամակցություն: Այսպիսով բոլոր տարրերն ունեն քիմիական եներգիալի վորոշ պաշար, վորը պահպանվում ե յուրաքանչյուր տարրի կողմից՝ անորոշ չափով յերկար ժամանակ և հանդես ե գալիս վորպես ձգողություն՝ համապատասխան պայմաններում, քիմիական նոր նյութեր գոյացնելով:

Քիմիական ուեակցիաների ժամանակ ուեակցիային մասնակցող նյութերի ունեցած եներգիայի պաշարի մի մասը դուրս ե գալիս վորպես ջերմություն: Որինակ՝ 2 գրամ H_2 -ը 16 գրամ O_2 -ի հետ միանալիս գոյանում ե 18 գրամ ջուր (H_2O) և արձակվում ե 69 մեծ կալորիա ջերմություն (այնքան ջերմություն, վոր մեկ լիտր ջրի ջերմաստիճանը կբարձրացներ 69° ով): Ընդհակառակը, 18 գրամ ջուրը H և O_2 -ի տարրակուծելու համար, հարկավոր ե հաղորդել նրան 69 մեծ կալորիա ջերմություն:

* * *

Քիմիական զանազան ուեակցիաներ, այն ել չափանց բարդ բնույթի, կատարվում են նաև բույսերի ու կենդանիների որդանիզմների մեջ: Այդ ուեակցիաների ամենաքննորոշ առանձնահատկություններից մեկն այն ե, վոր որգանիզմի մեջ յեղած կայուն նյութերը հեշտությամբ են քայքայվում: որինակ՝ զյուկոզան (շաքար) քայքայվելով վեր ե ածվում ածխաթթվական գաղի և ջրի, սպիտակուցները — ամենաթթուների և այլ ավելի պարզ նյութերի և այլն: Այնինչ այդ միենալույն նյութերը լաբորատորիական պայմաններում նույն հեշտությամբ չեն քայքայվում: դրա համար կարիք ե զգացվում ոգնության կանչել:

ամենաուժեղ ռեակտիվիսիր (ներգործող նյութեր), ինչպես, որինակ, քրոմաթթու, աղաթթու և այլն։ Հայտնի յե նույնալիս, վորթե բույսերը և թե կենդանիներն իրենց ընդունած մննդից պատրաստում են բոլորովին նոր նյութեր՝ ուլա (կրախմալ), շաքար, յուղ, սպիտակուց և այլն։ Յեզ այս նոր նյութերը նույնպես պատրաստվում են սովորական պայմաններում։

Առորյա կյանքից շատերին, մանավանդ գյուղացիներին, լավ հայտնի յե, վոր ծլած հացահատիկները (ածիկ) քաղցրանում են։ Այս յերեսույթը բացատրվում է այն բանով, վոր հացահատիկների մեջ յեղած ուլան դառնում ե շաքար, վորից ել քաղցրանում և հացահատիկը (նույնն ե պատահում կարտոֆիլի հետ—ցուրտ նկուղներում պահելիս), Հայտնի յե նույնպես, վորթե ածիկից և թե շաքար պարունակող այլ բույսերից, ինչպես, որինակ, թթից, խախողից, խնձորից և այլն, վորոշ պայմանների մեջ զնելով նրանց, ստացվում ե ալկոհոլ (սպիրտ)։ Այս յերեսույթը բացատրվում է այն բանով, վոր հիշյալ մրգերի ու պատուղների մեջ յեղած շաքարը քիմիապես փոփոխվելով՝ վեր և ածվում ալկոհոլի և ածխաթթվական գազի (CO_2)։ Ալկոհոլի գոյացումն իմացվում ե շաքարահյութի (շիրայի) համից, իսկ ածխաթթվական գազի գոյացումը՝ շիրայի «յեռալուց»—պճալը։ Բարուց՝ գազը փոքրիկ պղպղուկներով բարձրանում ե շաքարահյութի մակերեսը և ցրվում ե ոդի մեջ։

Ուրեմն վորոշ պայմաններում ուլան դառնում ե շաքար, շաքարն՝ ալկոհոլ, ածխաթթվական գազ։ Սակայն այդ պրոցեսները գործնականում կատարողներից բոլորը չե, վոր գիտեն, թե ուլան շաքար և շաքարն ալկոհոլ դառնալու յերեսույթը տեղի յե ունենում տվյալ բույսերի սերմերի կամ պտուղների մեջ յեղած հատուկ նյութերի—այսպես կոչվող ֆերմենտների կամ ենդիմների աղքեցության շնորհիվ։ (Այն դեպքերում, յերբ ավյալ սլտղի մեջ համապատասխան ֆերմենտը չի լինում, այն բերվում ե կողմնակի ճանապարհներով)։ Բույսերի և կենդանիների, ինչպես նաև մեր սեփական որգանիզմի մեջ տեղի ունեցող շափականց բարդ, զարմանալի կենսական յերեսույթները կատարվում են որգանիզմների մեջ գտնվող ենդիմ—ֆերմենտների աղքեցությամբ։ Նրանց շնորհիվ ե, վոր բույսերի մեջ—յերկրի վրա ապօռող բոլոր կենդանիների և այդ թվում մարդու համար ամենակարևոր այդ լաբորատորիայում— պատրաստվում են ամենաբարդ և կարենը նյութերը՝ ուլան, շաքարը, սպիտակուցները, յուղերը, ներկերը և այլն և այլն։ Նրանց աղքեցությամբ են այդ նյութերը տեղափոխվում բույսի որգանիզմի մեջ և կու-

տակվում մի վորոշ տեղում։ Ուզան տերեների մեջ գոյանալով, ֆերմենտների ազդեցությունից շաքար դառնալով և լուծվելով հեղուկների մեջ՝ տերենի միջից փոխադրվում է բույսի այլ մասերը, փորտեղ բույսը նրանից նոր, այլ նյութեր ե պատրաստում։

Ֆերմենտ-ենզիմների շնորհիվ ե, վոր վոչ միայն գոյանում, այլ և փոփոխվում, մարսելի յեն դառնում բնական վիճակում անմարս նյութերը կենդանիների որգանիզմի մեջ։ Ուզան դառնում ե շաքար, սպիտակուցը — պեպտոն, յուղերը — սապոն և այլն, վորից հետո միայն այս նյութերը ծծվում են կենդանիների որգանիզմի, նրանց արյան մեջ, և այնտեղ մարսվում են։

Այսպիսով ֆերմենտ-ենզիմներն ամենագործոն մասնակցություն ունեն բույսերի և կենդանիների կենսական պրոցեսներին։ Նրանց բացակայությունը միշտ առաջ ե բերում բույսերի և կենդանիների կենսական գործունեյության մեջ ավելի կամ պակաս անսորմալություններ։ Ենզիմ-ֆերմենտներն անպայմանորեն անհրաժեշտ են բոլոր բույսերի ու կենդանիների կենսական նորմալ գործունեյության համար։ Այս կամ այն պատճառով որգանիզմի մեջ այդ ենզիմ-ֆերմենտների արտադրությունը խախտվելու դեպքում անխուսափելիորեն խանդարվում է որգանիզմի նորմալ գործունեյությունը, առաջ են գալիս զանազան հիվանդագին յերևույթներ։ Սակայն որգանիզմի միայն կենդանի ժամանակը չե, վոր նրա ներսում կատարվում են բազմաթիվ ու բազմապիսի յերևույթներ։ Որգանիզմի մահից հետո ևս շարունակվում ե նյութերի քայլացյունն ու դրա հետեանքով գոյացած նյութերից նորերի գոյացումը, վորոնք իրենց հերթին ծառայում են վորպես շինանյութ՝ նոր որգանիզմների աճման, զարգացման համար։ Այսպիսով նյութերը բնության մեջ իրենց հավիտենական շրջապտույտն են կատարում և այդ պտույտի մեջ բոլոր քիմիական պրոցեսներին իրենց մասնակցությունն ունեն ֆերմենտ-ենզիմները։ Վոր իսկապես բոլոր կենսական բարդ պրոցեսները կատարվում են ֆերմենտ-ենզիմների ներկայությամբ և ազդեցությամբ, այդ յերևում ե այն բանից, վոր, որինակ, ծլած մերմից պատրաստած եքստրակտը (հյութը) նույնակես առաջ ե բերում ուլայի շաքարացում։ Նույն կերպ ե ազդում նաև կենդանիների և մարդու թուքը։ Պատրաստած եքստրակտից կարելի յե սպիրտով նաեւցնել նրա միջի ֆերմենտը («դիաստաղ»), վոր կարելի յե չորացնել և գործ ածել ցանկացած ժամանակ։ Չորացնելուց ֆերմենտն իր ուժը չի կորցնում և գործադրության ժամանակ ազդում ե այնպես, ինչպես այն ազդում ե բույսի կամ կենդանու որգա-

Նիզմի մեջ գտնված ժամանակը՝ Առորյա կյանքում նման ձևով ել վարդում են պյուղացիները՝ տավարի, մանավանդ հորթերի ստամբօսը՝ «Պուրսաղը» պահելիս, վոր հետո գործադրում են մակարդ («մայա») պատրաստելու համար: «Պուրսաղից» մակարդի մեջ անցած փերմենտը կաթի վրա աղդում ե այնպես, ինչպես նա աղդում ե հորթի ստամբօսի մեջ՝ նրա կենդանի յեղած ժամանակ, այն ե՝ մակարդում («կտրում») և կաթի մեջ յեղած սպիտակուցը (պանրի դոյացում): Այսպիսով անվիճելի յե, վոր բույսերի և կենդանիների որգանիզմների մեջ իրոք կան հատուկ նյութեր — փերմենտ-հնգիմներ, վորոնց գերն այն ե, վոր աղդում են զանազան նյութերի այս կամ այն քիմիական փոփոխությունների յենթարկվելու ընթացքի ուղղության վրա, տոն են տալիս այդ փոփոխություններին, արագացնում կամ զանգաղեցնում են նույն այդ փոփոխությունները:

Փերմենտատիվ — կատալիտիկ յերևույթները կատարվում են մեզ համար աննկատելի կերպով, վորովիճետե նրանց ժամանակ տեղի չեն ունենում այնպիսի աշքի ընկնող եֆեկտներ, վորոնց մենք ականատես ենք լինում շատ հաճախ՝ քիմիական լաբորատորիաներում, այս կամ այն քիմ. ռեակցիան կատարելիս: Բնության մեջ բոլոր հիմնական պրոցեսները կատարվում են ֆերմենտ-կատալիզատորների մասնակցությամբ: Այդ յերևույթներն անհրաժեշտ ե ուսումնասիրել ամենամարդամասն կերպով — նրանց իսկապես ժարգուն ծառայեցնելու նպատակով:

Իրենց աղդման ուժով, մանավանդ աղդման ուղղությամբ, փերմենտները տարբեր են: Նրանցից վոմանք աղդում են մի տեսակի նյութերի վրա (որինակ՝ շաքարների վրա) և չեն աղդում ուրիշ նյութերի (որ. սպիտակուցի) վրա, մյուսները — ընդհակառակը — աղդում են այն նյութերի (նրանց հետ կատարվող ռեակցիաների) վրա, վորոնք չեն աղդում մյուս ֆերմենտներից:

Շատ հետաքրքրական ե, վոր ֆերմենտները նյութերի, քիմիական ռեակցիաների վրա աղդում, կամ փոփոխություն են տուած բերում նաև իրենց՝ ամենաչնչին քանակով լինելու գեպքում, և այս ֆերմենտների ամենաբնորոշ հատկանիշներից մեկն եւ Այսպես, Տոմոսնի և Աստուլիվանի հաշվիմերով ենդիմներից մեկը, վորը կոչվում է ինվերտազ, ընդունակ և հիդրոլիզի (քիմ. փոփոխության) յենթարկել իրենից 200 000 անգամ ավելի քանակով շաքար: Մեկ կշռային մաս «Պուրսաղը», ըստ Գումարութենի, կարող ե մակարդել 400 000 կշռային մաս կազեյին (կաթի մեջ յեղած սպիտակուց և այլն):

Վերը մենք տեսանք արդեն, վոր բոլոր որդանիզմների մեջ տեղի ունեցող քիմիական փոփոխությունների շատ կարևոր առանձնահատկություններից մեկն ել այն ե, վոր որդանիզմի մեջ գտնված կայուն բարդ նյութերը քայքայվում են հեղտությամբ, այնինչ նույն նյութերը լաբորատորիական պայմաններում նույնպիսի հեղտությամբ չեն քայքայվում — կարիք ե զգացվում ստեղծել հատուկ պայմաններ՝ բարձր ջերմության, ուժեղ ուսակտիմների գործադրության (որ. աղաթթու, քրոմաթթու և այլն): Բավական ե հիշատակել թեկուզ խաղողաշաքարի (գլյուկոզայի) քայքայումը CO₂-ի և ջրի, սպիտակուցների քայքայումն ամենաթթուների և այլն: Որդանիզմների ներսում այդ և նման ուսակցիանների հեշտ կատարվելու պատճառն ենքիմներն են:

Սակայն բազմաթիվ քիմիական ուսակցիաններ նույնպես չեն կատարվում ջերմության և ճնշման սովորական պայմաններում, կամ կատարվում են շատ դանդաղ, ինչպես տեսանք վերը: Քիմիական ուսակցիանների արագության վրա մեծ չափով ազդում են՝ ջերմությունը, լույսը, ուլտրամանուշակագույն ճառագայթները, ճնշումը: Բացի քիմիական ուսակցիանների վրա ազդող այս ֆակտորներից, առանձնապես ազդում են նաև վորոշկողմնակի, ուսակցիային ըստ յերեսույթին չմասնակցող և ուսակցիայի վերջնական պրոդուկտների կազմի մեջ չհայտնաբերվող պարզ կամ բարդ նյութերը: Նատ դեպքերում այդ նյութերի ազդեցությունն այնքան մեծ ե, վոր նրանք ուսակցիանիրի արագությունը փոխում են ամենամեծ, անսպասելի չափերով, նպաստելով, կամ ընդհակառակը, խանգարելով, արգելակելով նրանց:

Վերը մենք տեսանք, վոր ջրի բաղադրիչ մասերը — ջրածինը (H) և թթվածինը (O) սովորական պայմաններում այնքան դանդաղ են միանում իրար, վոր չի հաջողվում հայտնաբերել ջրի գոյացումը՝ պետք կլիներ դարերով սպասել, վորպեսզի գոյանար գոնե $1/1000$ գրամ ջուր: Սակայն յերբ ուսակցիայի ջերմաստիճանը բարձրացվում ե մինչ 500° , այս պայմաններում ջրածնից և թթվածնից գոյանում ե այնքան ջուր, վոր կարելի յե հայտնաբերել: 700° ժամանակ գոյանում ե մոտ հազար անդամ ավելի ջուր՝ քան 500° ժամանակ:

Սակայն յեթե ջրածնի և թթվածնի խառնուրդին բոց կամ հյեկտրական կայծ մոտեցնենք, ջուրը վալրկենաբար կդոյանա: Մյուս կողմից՝ հայտնի յե, վոր, որինակ, մանր ջարդած պլատին մետաղի (Pt) ամենաաննշան քանակն անդամ բավական ե,

վորպեսղի ջրածինն ու թթվածինը սովորական ջերմաստիճառում միանալով ջուր գոյացնեն, ըստ վորում պլատինն ինքը նկատելի չափով փոփոխության չի յենթարկվում և այդպես կարող ե անսկերջ ազդել մեծ քանակով ջրածնի ու թթվածնի վրա։ Այսպիսով մանր փշրած պլատինը հեշտացնում — արագացնում ե ռեակցիան, կատարելով այն սենյակի սովորական ջերմաստիճանում՝ ինքը մնալով այնպես, ինչպես յեղել ե ռեակցիայի սկզբում։

Մի այլ որինակ կա ջրածնի և թթվածնի մի ուրիշ միացություն, փորը կոչվում ե ջրածին պերոքսիդ (H_2O_2)։ Այս հեղուկը սովորական պայմաններում քայլայվում ե, արձակելով թթվածին և վերածվելով ջրի ($2H_2O_2 - 2H_2O + O_2$)։ Սակայն այս քայլայումը կատարվում է շատ դանդաղ, 30% ջրածին — պերոքսիդը 17° ժամանակ կիսով չափ քայլայվում է միայն 240 ժամվա ընթացքում։ Յեթե նրա մեջ զցենք պլատին, «կատարաղ» և «պերոքսիդաղ» ենդիմիները, նրա քայլայումը կկատարվի չափազանց արագ, պլատին սեվի դեպքում — մի քանի վայրկյանի ընթացքում։

Ջրածին պերոքսիդը քայլայվում է նաև այն դեպքում, յերբ նրա մեջ զցում ենք կալոիդ պլատին՝ միլիոն անգամ քիչ ժամանակով (195 դրամ պլատին 700 միլիոն լիտր ջրում)։ Այս դեպքում ևս պլատինը բոլորովին փոփոխության չի յենթարկվում։ Այն բոլոր նյութերը, վորոնք իրենց ներկայությամբ առաջ են բերում քիմիական ռեակցիաներ կամ ազդում են նրանց վրա՝ նրանց արագությունը կամ ուղղությունը փոփոխելու իմաստով, և իրենք փոփոխության շեն յենթարկվում (ըստ յերեւութին), կոչվում են կատալիզատոներ, իսկ նրանց ներգործությամբ կատարվող ռեակցիաները կոչվում են կատալիտիկ ռեակցիաներ։ Մի փոքր առաջ բերած որինակի մեջ պլատինը կատալիզատոր ե, իսկ նրա ազդեցությամբ կատարվող ջրածին պերոքսիդի քայլայումը — կատալիտիկ ռեակցիա։

Ենդիմիները («կատալաղ», «պերոքսիդաղ», «զուրսաղի» միջի ենդիմը, թքի միջի ենդիմը և այլն) նույնպես կատալիզատորներ են՝ կինդանական կամ բուսական ծագումով։ Հարմարության համար վերջիններս ուսումնասիրվում են վոչ թե քիմիական կատալիզատորների հետ, այլ առանձին։

* * *

Ժամանակին Բերցելիումն ուշադրություն դարձնելով ֆերմենտատիվ և կատալիտիկ ռեակցիաների վրա, ընդգծում եր

նրանց նմանությունը և այդ յերեսույթներն ուսումնասիրելու կարևորությունը քիմիկոսների համար: Իր «Քիմիայի դասագրքում» նա գրում եր. «Մենք ստիպված յեղանք համոզվել, վոր շաքարի՝ CO₂ և սպիրտ դառնալը, ինչպես այդ կատարվում ե խմորման ժամանակ մի անլուծելի նյութի ներկայությամբ, վորին մենք ֆերմենտ ենք կոչում, չի կարող բացատրվել շաքարի և ֆերմենտի միջև տեղի ունեցող կրկնակի փոխանակության ռեակցիայի նման մի բանով: Բայց յեթե մենք գիմենք անորդանական աշխարհի մեջ ծանոթ յերևույթներին, ապա մենք կգտնենք չափազանց նման մի պրոցես, յերբ ջրածին պերոքսիդը տարրալուծվում ե՝ պլատինի, արծաթի (Աց) կամ ֆիբրինի ազդեցությամբ»: Միանդամայն բնական և յենթազրել վոր ֆերմենտի դեպքում մենք ունենք նման մի պրոցես: Բերցելիում արձանագրում եր, վոր «կենդանի որգանիզմի մեջ՝ նրա հյուսվածքների և հեղուկների մեջ տեղի յեն ունենում հազարավոր կատալիտիկ պրոցեսներ»:

Մարդը շատ վաղ ժամանակներից սկսած, թեև անդիտակցաբար, ոգտվել ե կատալիտիկ շատ ռեակցիաներից: Վերը մենք խոսեցինք ծլեցնելու միջոցով հացահատիկները քաղցրացնելու, շաքարային լուծույթները («շիրա»)՝ ալկոհոլ (գինի, ողի), ալկոհոլը քացախ դարձնելու մասին, վորոնք շատ հին ժամանակներից հայտնի եյին հին կուտուրական Խողովուրդներին: Սակայն, բացի դրանցից, ճնում, որինակ՝ արաբներին հայտնի յեր նաև այսպիսի կարենը կատալիտիկ մի ռեակցիա, ինչպես սպիրտի թորումից ծծմբական կոչվող եթերի ստացումն ե՝ ծծմբական թթվի հետ միասին: Այդ ռեակցիաներն, ինչպես վերն ասացինք, չեյին լուսաբանվում և հիմնավորվում թեորետիկ բացառություններով:

Թե վորքան կարենը գործադրական նշանակություն ունի կատալիզը (համապատասխան կատալիզատորի ընտրությունը, պատրաստումը և գործադրությունը), այդ յերեսում ե այն բանից, վոր քիմիական արդյունաբերության, մասնավորապես քիմիական հիմնական և սինթետիկ նյութերի արդյունաբերության մի ամբողջ շաբթ կազմակերպվել ե ու ծավալվել միմիայն համապատասխան կատալիզատորների հայտնագործման ու կիրառման շնորհիվ: Հաբերի վոչ լրիվ հաշիվների համաձայն՝ 1928 թ. ամբողջ աշխարհում կատալիտիկ յեղանակով արտադրված միայն քիմիական հիմնական նյութերի արժեքը հավասար եր մեկ միլիարդ վուկի ոռուբրու:

Մինչև XVIII-րդ դարի վերջը քիմիական արդյունաբերու-

թիունը շատ դանդաղ եր դարդանում: Նա առանձնապես արագ դարդացավ և մարդկային կյանքում շատ աչքի ընկնող դեր խաղալ սկսեց վերջին 50—70 տարիների ընթացքում:

Մինչև XIX-րդ դարի կեսերը բույսերի և կենդանիների մեջ կատարվող որդանական բազմաթիվ միացումների գոյացումը ժամանակի քիմիկունները բացատրում եղին՝ ոգնության կանչելով «կենսական ույժ»-ին, վորն իրը թե հատուկ եր միայն բույսերին ու կենդանիներին և վորն իրը թե «անկենդան» բնության վրա չեր տարածվում: Անգամ հոչակավոր թերցելիս իր քիմիայի դասագրքում (1827 թ.) այն համոզումն եր արտահայտում, վոր «կենդանի բնության մեջ ելեմենտները (քիմիական ամենապարզ նյութերը՝ տարբերը, վ. Ս.) յենթարկվում են այլ որենքների, քան վոր կան անկենդան բնության մեջ», և վոր սովորական ֆիզիկական-քիմիական ուժերն անկարող են առաջ բերել որդանական նյութերի գոյացում, վորի համար անպայման հարկավոր ե «կենսական ույժ»: Այս իդեալիստական հայացը հենվում եր բուսական և կենդանական որդանիզմների մեջ կատարվող պրոցեսների զարմանալի բարդության վրա: Թիմիկուններին չեր հաջողվում բույսերից ու կենդանիներից անկախ, արհեստական յեղանակով ստանալ որդանական նյութերը, և այդ ամրացնում եր կենսական ուժի տեսակետի կողմանակիցների գիրքերը:

1828 թ. Վյոլերն առաջին անգամ կարողացավ արհեստականորեն պատրաստել որդանական մի նյութ (միզանյութ), վորը մինչ այդ ստացվում եր միմիայն կենդանիների մեզից, և դրանով առաջին լուրջ հարկածը հասցրեց կենսական ույժի տեսությանը: Դրանից հետո մեկը մյուսի հետեից արհեստականորեն պատրաստվեցին որդանական այլ նյութեր — քացախաթթու, մքջնաթթու, ճարպանյութեր և այլն, վորով վերջնականապես ապացուցվեց կենսական ույժի տեսության միանգամայն սխալ, անհիմն լինելը: Սակայն այդ իդեալիստական հայացքից քիմիկունները հրաժարվեցին վնչ միանդամից, այլ համառ ու բաղմամյա պայքարից հետո միայն:

Որդանական քիմիայի զարգացումն այն աստիճան առաջ գնաց վերջին մի քանի տասնամյակների ընթացքում, վոր քիմիկուններին հաջողվեց ստանալ բազմաթիվ այնպիսի նյութեր, վորոնք մինչ այդ ստացվում եյին կամ ուղղակի պատրաստ վիճակում՝ բույսերից ու կենդանիներից, և կամ բուսական ու կենդանական պրոդուկտների հետագա վերամշակումից: Այնպիսի արժեքավոր նյութեր, ինչպես, որինակ, կառչուելը, շա-

քարը, ալկոհոլը, մետաքսը, ալիգարինը, ինդիգոն և տասնյակ ու հարյուրավոր զանազան այլ նյութեր, այժմ արդեն հսկայական քանակով ստացվում են նաև արենեստական յեղանակով լաբորատորիաներում և գործարաններում:

1929 թ. ավալներով ամբողջ աշխարհում արտադրվում եր 15—16 միլիոն տոնն ծծմբական թթու (H_2SO_4), վորի 30% կոնստակտի (կատալիզի) մեթոուլի վերամշակված ճարպերի տարբեր (քիմիապես ջրածնով հագեցնելը) քանակությունը համառ եր 300 000 տոննի, ամիսակի կապված ազոտի քանակությունը — մոտ 900 000 տոննի, իսկ կապված ազոտի այլ միացություններն ել հաշված, տարեկան արտադրանքի արժեքը հասնում է 500 միլիոն վոսկի ռուբլու:

Կատալիզի տնտեսական նշանակությունն աճում է հսկայական չափերով: Ծաղկում ու զարգանում են սինթետիկ կառաջուկի, մետաքսի, նավթի, կրեկինգի և բազմաթիվ այլ արդյունաբերական ճյուղեր: Բավական ե հիշատակել թե կուզ միայն մի նյութի՝ ինդիգո ներկին վերաբերող մի քանի թվեր, ցույց տալու համար սինթետիկ քիմիայի զարգացման տեմպը: Ուսենիուսի տվյալներով Գերմանիան ինդիգո ներմուծել ե՝ 1896 թ. — 20,7 միլիոն վոսկի մարկի, իսկ 1911 թ. — 0,45 միլիոն մարկի: Արտահանել ե՝ 1896 թ. — 6,3 միլիոն մարկի, իսկ 1911 թ. — 41,8 միլիոն մարկի, թեև շնորհիվ ինդիգոյի ստացման սինթետիկ յեղանակի հայտնագործման՝ նրա գինն ընկել եր ավելի քան 5 անգամ: Քիմիական արդյունաբերության այս ճյուղի զարգացման շնորհիվ ել բնական (բուսական) ինդիգո վաճառհանող հնդկաստանի արտահանությունը նույն տարիների ընթացքում կրճատվել իջել եր 72 միլիոն մարկից մինչև 4,5 միլիոն մարկ:

Շարունակ ստացվել ու ստացվում են նաև բազմաթիվ այնպիսի որգանական նյութեր, վորոնք մինչեւ այժմ ել անհայտ են որգանիզմների մեջ:

Քիմիայի այս հաղթական առաջընթացումն աչքի ընկնող գերե կատարել ու կատարում ե նաև այժմ կատալիզը: Սակայն կատալիզի կիրառման հաջողությունների նշանավոր մասը ձեռք ե բերվել կուրորեն, զուտ եմպիրիկ աշխատանքների, անվերջ խարխափումների, աշխատանքը թանդացնող մեթոդների ճանապարհով, վորովինետն մեծ մասամբ աշխատանքը կատարվել ե առանց տեսության ցուցմունքների և առանց նրա հետ շաղկապված լինելու, քանի վոր «արակիտիկան կույր ե դառնում, յեթե իր հանապարհը հեղափօխական տեսությամբ չի լուսա-


վորում» (Ստալին): Ներկայումս բոլոր առաջավոր յերկրներում առանձնակի մեծ ուշադրություն են դարձնում կատալիզին վերաբերող խնդիրների, կատալիտիկ աշխատանքների վրա: Ինչպես գիտության ու տեխնիկայի բոլոր բնագավառներում, այդպես ել և այս բնագավառում ԽՍՀՄ-ն իսկական նվաճումներ են կատարել:

* * *

Վերն արդեն մենք տեսանք, վոր կատալիտիկ շատ պրոցեսներ մարդուն հայտնի եյին շատ վաղ ժամանակներից: Ստալին նրանց վրա զիտնականներն սկսել են ուշադրություն դարձնել միայն վերջին $1 - 1\frac{1}{2}$ դարի ընթացքում (Պատմանայել 1776 թ., Կեմենտ և Դեզորմ 1806 թ., Դեվի, Դորերայներ Դյուլոնել 1829 թ., Միտզերլիկո 1884 թ. և այլն): 1811 թ. Կիրխոֆը նշեց, վոր ոսլան (կրախմալ) անորգանական թթուների հետ տաքացնելիս դառնում ե շաքար և տեքստրին, ըստ վորում թթուները փոփոխության չեյին յենթարկվում: 1817 թ. Դեվին նկատեց, վոր քիչ տաքացրած պլատինի լարը յեթե մտցվում ե ողի և վորեե վառվող գազերի խառնուրդի մեջ, պլատինե լարը շիկանում ե, իսկ գազերը դանդաղորեն բարիտանում (այրվում) են և այլն: Չնայած այս բանին, կատալիզի արագ զարգացումը տեղի յե ունեցել միայն վերջին մի քանի տասնամյակների ընթացքում, թեև կատալիզին վերաբերող շատ հարցեր գեռ մինչ այժմս ել լրիվ լուսաբանված, սպառիչ կերպով բացատրված չեն:

Թեև կատալիզն աշխատանքի նոր բնագավառ ե, բայց նա, ինչպես ասացինք, շատ արագ ե աճում ու զարգանում:

«Կատալիզ» տերմինը քիմիայի մեջ մտցրել ե շվետական հոչակավոր քիմիկոս Բերցելիուսը (1836 թ.), վորի մի քանի տեսակետներին մենք արդեն ծանոթ ենք: Այդ տերմինով Բերցելիուսը նշում եր մի շարք այնպիսի նյութերի ընդհանուր հատկությունները, վորոնք քիմիական ուեակցիաների վրա ազդում ձն միմիայն իրենց ներկայությամբ, առանց փոփոխության յենթարկվելու: Վերն արդեն հիշատակած իր գրքի մեջ նա նկարագրեց այն ժամանակ հայտնի բոլոր այն ուեակցիաները, վորոնք մինչ այդ անհասկանալի եյին, — ուեակցիաներ, վորոնք հաճախ կատարվում են բուռն կերպով ուեակցիաների ընթացքում փոփոխության չենթարկվող և ուեակցիայի վերջնական պրոցեսների կազմի մեջ չհայտնաբերվող վորոշ կողմնակի նյութերի ներկայությամբ միայն: Նման յերևույթներն ի մի համախմբելով՝ Բերցելիուսը նրանց տվեց «կատալիտիկ



ռեակցիաներ» ընդհանուր անունը, հունարեն «կատալիզ» բառից, վոր նշանակում ե «քայլայում եմ», «տարրալուծում եմ»:

Մի ուրիշ գիտնական՝ Միտչերլիխը ուսումնասիրելով եթերի գոյացումը ծծմբական թթվի ներկայությամբ՝ սովորական ալկոհոլից, գրում ե. «Բերած փաստերից բղխում ե, վոր սպիրտը ծծմբական թթվի հետ մոտ 140° ջերմության ժամանակ վեր ե ածվում եթերի և ջրի: Նման յեղանակով կատարվող տարրալուծման և միացման ռեակցիաները շատ հաճախ են պատահում: Մենք նրանց կնշանակենք վորպիս տարրալուծման ռեակցիաներ կոնյակից միջոցով»: Այսպիսով այն ռեակցիաները, վոր բերցելիումը համախմբեց կատալիտիկ ռեակցիաներ անունով, Միտչերլիխն անվանեց կոնտակտային ռեակցիաներ: Ապա նա նկարագրում ե մի շարք կոնտակտային ռեակցիաներ, վորոնց մենք վերը ծանոթացանք (H_2O_2 -ի քայլայումը պլատինով, մանգանպերոքսիդով, շաքարի քայլայումը սպիրտի և ածխաթթվական գազի), ապա առողյա կյանքից հայտնի ալկոհոլի ոքսիդացումը (թթվելը) և քացախաթթվի վեր ածվելը (միկրոօքանիզմների արտադրած ֆերմենտների ազդեցությամբ), ապա ջրածին պերոքսիդի քայլայումը՝ վոսկու, արծաթի և այլ նյութերի ներկայությամբ:

Միտչերլիխը նույնպես արձանագրում եր, վոր այդ ռեակցիաների ժամանակ կատալիզատորի (կոնտակտի) դեր կատարող նյութերն իրենք վոչ մի փոփոխության չեն յենթարկվում, այլ արագացնում են ռեակցիաները, ըստ վորում կատալիտիկ յերեւույթների շարքը դասեց նաև ֆերմենտատիվ պլոցեմները:

Առաջին կատալիտիկ յերեւույթները, վորոնք իրենց վրա յենդարձրել քիմիկոսների ուշաղը ությունը, հետևյալներն են՝ տեխնիկայի արդյունաբերության համար չափազանց կարևոր ծծմբական թթու ստանալը, ոսլայի շաքարացումը, ֆուֆորի ինքնարերաբար ոքսիդանալը, ապա մետաղների ազդեցությունը զանագան որդանական նյութերի վրա, վորոնք նկատվել են պատահաբար:

Ժամանակակից քիմիական և սրան հարակից արդյունաբերական ճյուղերի համար հսկայական նշանակություն ունեցող ծծմբական թթվի պատրաստումը թեև յավ հայտնի յեր դեռևս XIX դարի ալքիմիկոսներին, սակայն այդ կարևոր պրոդուկտի տեխնիկական արտադրությունը զարգացավ միայն XIX դարի կեսերին — Անգլիայում:

XVIII-րդ դարում ծծմբական թթուն ստանում եյին այսպես. ծծումը այրում եյին ողում, վորի հետևանքով գոյանում

եր ծծումբի և թթվածնի միացությունը — ծծմբային գազը (SO_2) (վոր գոյանում ենակ Ալլահվերդսւ ձուլարանում՝ հանքաքարը ձուլելիս), վորը թողնում եյին ողի և ջրի հետ միասին — ապակյա մեծ ամանների մեջ։ Ծծմբային գազը լուծվում եր ջրում, գոյացնելով ծծմբային թթու (H_2SO_3), վորը դանդաղորեն ոքսիդանալով՝ դառնում եր ծծմբական թթու (H_2SO_4)։ Հետագայում (1820 թ.) ծծումբի այրումն ու ոքսիդացումը հեշտացնելու համար փորձեցին նրան ավելացնել սելիտրա (բորակ, NaNO_3), վորի մեջ պարունակվող թթվածնի հաշվին ել պետք ե կատարվեր ծծումբի ոքսիդացումը։ Փորձը դրական արդյունք տվեց՝ ռեակցիան զգալի չափով արագացավ սելիտրայի ավելացումից։ Սակայն այդ արագացումը տեղի յեր ունենում նաև այն ժամանակ, յերբ սելիտրան այնքան քիչ քանակով եր ավելացվում, վոր նրա միջի թթվածինը բավական չեր՝ յեղած փողջ ծծումբն ոքսիդացնելու համար։ Պարզվեց, վոր սելիտրա ավելացվում հետեանքով առաջացած ռեակցիայի արագացման պատճառը ռեակցիայի ժամանակ սելիտրայից գոյացող աղոտի յերկոքսիդն ե — կարմիր-դարչնագույն մի գաղ, վոր հաստատվում ե այն բանով, վոր ծծմբական թթուն ստանալու արագացում տեղի յե ունենում նաև այն դեպքում, յերբ ծծումբն այրելու ռեակցիայի մեջ չի մտցվում սելիտրան, այլ ծծմբային գազի, ողի և ջրի խառնուրդին ավելացվում ե աղոտի յերկոքսիդ։

Ծծմբական թթու պատրաստելու ժամանակակից յեղանակը դիմափորապես հիմնված ե այս գիտողության վրա։ Ներկայումս ամբողջ աշխարհում կոնտակտային յեղանակով պատրաստվող ծծմբական թթվի քանակը տարեկան հավասար է 5 միլիոն տոննի, կամ ամբողջ քանակության 30%.-ին։

Աղա պարզվեց, վոր ուլան թույլ թթուների ազդեցությամբ կամ ուղղակի ջրով յերացնելիս դառնում ե դիքսարին և շաքար։ Այնուհետև ուսումնասիրվեցին այլ ռեակցիաներ, վորոնք կատարվում են կատալիգատորների ներկայությամբ, նրանց ներդործությամբ։ Նկատեցին, վոր աղոտի բոլոր թթվածնային միացությունները բավականաչափ ջրածնի հետ խառնված սպունգային պլատինի աղղեցությամբ դառնում են ամիակ (Կուլման, 1838 թ.), վոր նույն սպունգային պլատինի ներկայությամբ որդանական նյութի վրայից թթվածին անցկացնելիս այդ որդանական նյութն այրվում ե ցածր ջերմաստիճանում, վոր ծծումբը և ջրածնը միանում են պեմզայի աղղեցությամբ և այլն։

Ահա այս և սրանց նման մի քանի այլ փաստերի վրա յեր, վոր իրենց ուշադրությունը դարձրին Բերցելիում ու Միտչեր-լիխը: Թեև նրանք չկարողացան բացատրել կատալիտիկ ռեակ-ցիաները, սակայն նրանք կատարեցին այն կարևոր գործը, վոր համախմբելով նման փաստերը՝ «կատալիտիկ յերևույթներ կամ ազդեցություններ» անվան տակ, նրանց վրա, նրանց ուսում-նասիրելու և բացատրելու վրա դարձրին քիմիկուների ուշա-դրությունը:

Քիմիայի գարգացման ընթացքում հետդետե հայտնի դար-ձան ու շարունակում են հայտնագործվել կատալիտիկ նորանոր ռեակցիաներ և նոր կատալիզատորներ, վորոնք աստիճանաբար մուտք են գործում և ամրանում արդյունաբերական պրակտի-կայի մեջ:

* * *

Կատալիզատորի դեր կարող են կատարել ֆիզիկական տար-բեր վիճակում գտնվող և քիմիական տարրեր բաղադրություն-ունեցող պինդ, հեղուկ և գազային մարմինները, ամենաբազ-մատեսակ նյութերը՝ մետաղները, հիմքերը, թթուները, աղերը, ոքսիդները... և ընդհանուրապես ասած — համարյա բոլոր տար-բերն ու նյութերը: Ի հարկե, այդ տարրերից ու նյութերից յուրաքանչյուրը վորպես կատալիզատոր պիտանի յե առանձին և վոչ թե բոլոր դեպքերի համար, և տարրեր ի ֆերկու ե տալիս:

Կատալիզատորի դեր կարող են խաղալ նաև լույսը, ուլտ-րա-մանուշակագույն ճառագայթները, ելեկտրականությունը և այլն, ինչպես և ֆերմենտ-ենզիմները, վորոնց մասին արդեն հիշատակված ե վերը:

Եենելով տարրերի և քիմիական միացությունների հատ-կություններից, կարելի յե ասել, վոր բոլոր քիմիական ռեակ-ցիաների վրա յել կարելի յե ազդել կատալիտիկորեն, յեթե միայն նրանց համար համապատասխան կատալիզատոր ընտրվի:

Հայտնի յե, վոր կան բուսական հիվանդություններ, վորոն-ցով վարակվելու ընդունակ ե բուսական վորեե մի ամբողջ ցեղ կամ ընտանիք, ինչպես և կան հիվանդություններ, վորոնցով հիվանդանալ կարող ե միայն մի վորեե կոնկրետ բուսական տեսակ: Սրան համապատասխան ել — հիվանդություններին ընդ-դիմանալու ընդունակությունը — իմունիտետը (կամ նրա բա-ցակայությունը) լինում ե ցեղային և անհատական:

Ճիշտ այդպես ել՝ կան վորոշ տիպի ռեակցիաների խմբերի համար ընդիտնուր և միայն մեկ ռեակցիայի, միայն մեկ նյութի

համար գործադրվող մասնավոր կատալիգատորներ։ Այստեղից պարզ ե, թե վերը այսարձակ ե կատալիտիկ յերևույթների բնագավառը։ Կատալիտիկ ռեակցիաների թիվը աճում ե մեծ արագությամբ։ այդ ռեակցիաները խոշոր չափերով գործադրվում են քիմիական արդյունաբերության բոլոր բնագավառներում, և նրանց դերն որը ավելի ու ավելի յե աճում։

Բազմաթիվ ու բազմատեսակ կատալիտիկ բոլոր ռեակցիաները բաժանվում են յերկու խմբի։

ա) կատալիտիկ ռեակցիաներ, զորոնք կատարվում են միասուր վիճակում։ այս դեպքում ռեակցիային մասնակցող նյութերի և կատալիգատորի բոլոր մասնիկները լիակատար կերպով շփվում են իրար հետ։ որինակ՝ յերբ ռեակցիայի մեջ են մտցվում գազերը, իսկ կատալիգատորի դերը կատարում են ջրային գոլորշիները։ կամ յերբ ռեակցիայի մեջ են մտցվում հեղուկները, իսկ կատալիգատորի դերը կատարում են նույնպես հեղուկները (որ, թթուները)։ Այսպիսի պայմաններում կատարվող կատալիտիկ յերևույթները կոչվում են նույնպես կատալիպ։ Կատալիպատորն ազդում ե իր մասսայով։

բ) կատալիտիկ ռեակցիաներ, յերբ ռեակցիային մասնակցող նյութերը և կատալիգատորը միանվույն քիզիկական վիճակում չեն գտնվում։ որինակ՝ յերբ ռեակցիայի մեջ մտցվող նյութերը գազեր կամ հեղուկներ են, իսկ կատալիգատորը պինդ մարմին ե։ Այս դեպքում կատալիգատորն ազդում ե իր մակերեսով միայն Ուսաի վորքան մեծ լինի նրա մակերեսը (որ ծակոտկենության շնորհիվ), այնքան ավելի մեծ կինի և նրա աղղեցությունը։ Այս տիպի կատալիգը կոչվում ե նետերգեն կատալիպ։ Բացի կատալիգի այս յերկու տիպերից, առանձնացնում են նաև ավտոկատալիգը (ինքնակատալիպ), վորի եյությունը հետեւալն ե. վորոշ ռեակցիաների ժամանակ գոյացող պրոդուկտն իր ներկայությամբ կատալիտիկ աղղեցություն ե ունենում այն ռեակցիայի վրա, վորի ընթացքում գոյացել ե ինքը և արագացնում ե այդ ռեակցիան։ Որինակ՝ մաքուր ազոտական թթուն շատ դանդաղ ե ազդում մաքուր արծաթի, պղնձի, սնդիկի վրա։ սակայն այդ աղղեցությունն սկսվելով՝ աստիճանաբար արագանում ե—շնորհիվ ռեակցիայի ժամանակ ազոտի ոքսիդների գոյացման, վորոնք և (ոքսիդները) մեծ չափով ալ ազացնում են նախապես դանդաղ ընթացող ռեակցիան։

Մինչ այժմ մենք խոսում ենք այնպիսի կատալիգատորների (կամ կատալիգի) մասին, վորոնք արագացնում, նպաստում են ռեակցիաներին, և վոր ընդունված ե կոչել դրական

կատալիգատորներ: Մակայն հայտնի յեն նաև այնպիսի դեպքեր, յերբ վորոշ նյութեր հակառակ ներգործություն են ունենալում ուեակցիաների վրա՝ դանդաղեցնում են նրանց ընթացքը կամ իսպառ դադարեցնում են այդ ուեակցիաները: Այս խմբի մեջ են մտցվում նաև այն նյութերը, վորոնք ազդելով դրական կատալիգատորի վրա՝ չեզոքացնում են նրա կատալիտիկ ազդեցությունը, ուրիշ խոսքով — թունավորում են դրական կատալիգատորը (թունավորելու ընդունակ են նաև ֆերմենտ-ենզիմները): Հասկանալի յե, վոր կատալիգատորների բաժանումը «դրական»-ների և «բացասական»-ների — զուտ ոգտագործական (ուտիլիտար) բաժանում եւ: Արդյունաբերության համար հսկայական նշանակություն ունի կատալիգատորի մաքուր լինելը, վորովհետև վորքան մաքուր լինի կատալիգատորը, այնքան հաստատ, հաջող և տեսական կլինի նրա ազդումը համապատասխան ուեակցիայի վրա, ուրեմն և կպակասի արտադրության ինքնարժեքը: Հենց այս պատճառով ել նյութերը վորպես կատալիգատոր գործազրելիս՝ նախորոք պետք եւ ուշի-ուշով մաքրվեն կողմանակի խառնուրդներից և մեխանիկորեն կպած մարմիններից, վորովհետև խառնուրդներն ու կպած կողմանակի մարմինները կարող են թունավորել, արգելակել տվյալ նյութի կատալիտիկ հասկությունները:

Կատալիգատորները գործազրության մեջ մտցնելուց առաջ, բացի խառնուրդներից, կեղտից և գագերից մաքրելուց, հաճախ առանձնապես կարելի յե լինում կատալիգատորը բերել վորոշ ֆիզիկական վիճակի, մշակել նրա մակերեսը, վորը հենց հանդիսանում եւ կատալիտիկորեն ազդող մասը: Կատալիգատորի ֆիզիկական վիճակը, նրա մակերեսի դրությունը վորոշվում են նրա պատրաստման յեղանակով: Մակերեսի վիճակը վորոշելը շատ դժվար եւ: Մակայն այդ վիճակն, ինչպես ցույց են տալիս դիտողությունները, չափազանց մեծ նշանակություն ունի ուեակցիաների համար, քանի վոր նրանից եւ կախված, թե տվյալ կատալիգատորը տվյալ ուեակցիայի համար կինք: արդյոք իսկապես կատալիգատոր, ակտիվ ազդող մի նյութ, թե կլինի թույլը, սակավազոր մի կատալիգատոր, կամ կատալիտիկ հատկություն բոլորովին չունեցող մի նյութ: Ասածներս պարզենք որինակով: տաքբեր չափով տաքացրած կավահողն ունի կատալիտիկ տաքբեր ուժ: Իպատյելի փորձերը ցույց տվին, վոր վորոշ աստիճանից բարձր տաքացրած կավահողը կորցնում եւ իր կատալիտիկ ազդեցության ընդունակությունը: Իսկ տաքության

աղդեցությունն այն է, վոր վորոշ ջերմաստիճանից բարձր՝ փոխվում ե կավահողի ֆիզիկական վիճակը, նրա մակերեսը:

Այս պատճառով ել կատալիտիկ ռեակցիաներն սկսելուց առաջ փոչ միայն ընտրում են համապատասխան կատալիզատոր, այլև մշակում են վերջինս և ապա միայն գործադրում:

Բացասական կատալիզատորները շատ քիչ գործադրություն ունեն, վորովնեան քիչ դեպքերում ե, վոր ցանկալի յել լինում վորոշ ռեակցիաներ արդելակելի Այս պատճառով ել նրանք շատ ավելի քիչ նետաքրքրություն են ներկայացնում և շատ ավելի քիչ են ուսումնասիրված տեսականորեն, քան դրական կատալիզատորները, և այս բնագավառում դեռ մինչ այժմս ել, չնայած արդեն բավականաչափ հայտնի փաստերին, գերիշխում ե եմպերիզմը:

Բացասական կատալիզի որինակներից կարելի յել հիշատակել, որինակ, ջրածին պերոքսիդի ինքնաբերաբար կատարվող աւարրալուծման դադարումը: Lemione-ի հաշիվների համաձայն, այն ժամանակամիջոցը, վորն անհրաժեշտ է, վորպեսզի ջրածին պերոքսիդը 65⁰-ում քայլայվի կիսով չափ, հավասար ե 1,2 ժամի, իսկ յուրաքանչյուր 1 մոլ պերոքսիդին 0,026 մոլ աղաթի ավելացնելուց հետո նույն քայլայումը կատարվում է 35 ժամում: Ջրածին պերոքսիդի արագ քայլայումը նորից սկսվում է, յերբ չեղոքացվում ե նրան ավելացրած աղաթի թուլացնելուց հետո նույն քայլայումն արագացնելու նպատակով, զցելինք դրական կատալիզատորներ, որինակ՝ արծաթ, վոսկի, պլատին և նորից թթու ավելացնելինք, դարձյալ տեղի կունենար ռեակցիայի արդելակում: Այսպիսով աղաթի թուլացնելու կատարում և բացասական կատալիզատորի գեր՝ ջրածին պերոքսիդի քայլայման ժամանակ:

Ամիակի սինթեզի ժամանակ յերկաթը կատարում է կատալիզատորի գեր. սակայն պրոցեսին ամենաաննշան քանակով ծծումը մասնակցելու դեպքում յերկաթի աղդեցությունը չեղոքանում է (յերկաթը թունավորվում է) — նա կորցնում է իր կատալիտիկ հատկությունը: Այստեղից ել գործնական հետեւթյուն — ամիակի սինթեզի ժամանակ անհրաժեշտ և այնպես աներ վոր ծծումը ազատ վիճակում կամ միացությունների ձևով ներկա չինչի պրոցեսին:

Թե զբական և թե բացասական կատալիզատորների աղդեցության յենթակա ռեակցիաները կարող են լինել ինչպես միացման (սինթեզի), նույնպես և տարրալուծման (անալիզի) ռեակցիաներ:

Կատալիտիկորեն ազդող նյութերն, ինչպես վերն ասվեց,
կարող են լինել գազեր, հեղուկներ և պինդ նյութեր: Նրանց
թիմս անսահման մեծ ե, և կարելի յե ասել, վոր չկա մի նյութ,
վորը կատալիգատորի դեր խաղալու ընդունակություն չունենա՝
վորեն ռեակցիայի համար: Ուրեմն բոլոր նյութերն ել ռւնեն
կատալիգատորի հատկություն, սակայն այդ հատկությունը
յերեան ե գալիս վոչ բոլոր ռեակցիաների ժամանակ և վոչ
ամեն պայմաններում: Այդ պայմանները շատ սահմանափակ են:
Շատ դեպքերում միննույն կատալիգատորը ռեակցիայի ըն-
թացքի վրա կարող ե ազդել վորեն կերպ կամ սրան հակառակ
ուղղությամբ — նայած պայմաններին: Որինակ՝ սպունգային
պլատինի ներկայությամբ 250° ժամանակ ջրածինը և յոդն
արագ միանում են իրար: Սակայն նաև սպունգային պլատինը
նույն ջերմաստիճանում տարրալուծում ե յոդջրածինը: Վորոշ
կատալիգատորների (որինակ՝ պլատինի, նիկելի, պղնձի և այլն)
ազդեցությամբ մի շարք նյութեր իրեն ջրածին են միացնում
(հիդրօքնիգացիա): Սակայն նրանք նույն կատալիգատորների
ազդեցությամբ արձակում են և իրենց ջրածինը (դենիդրոգե-
նիգացիա): Ուրեմն միննույն կատալիգատորն ըստ եյության
ազդում ե (ընդունակ ե ազդելու) իրար միանգամայն հակա-
ռակ ուղղություններով:

Կատալիտիկ ռեակցիաների մեծ մասը կատարվում ե անգամ
կատալիգատորի ամենաաննշան քանակի ազդեցությամբ: Հաճախ
ջրային գոլորշիների ամենաշնչին քանակը գազերի նկատմամբ
կատալիգատորի դեր ե խաղում, վորովինետև բացարձակապես
չոր գազերը շատ քիչ են ընդունակ ռեակցիաների:
Ներկայումս գործադրվող կատալիգատորների մեծ մասը և
կարեոր նշանակություն ունեցողները — անորդգանական կատա-
լիգատորներն են, պարզ նյութերի (տարրերի) կամ նրանց
միացությունների ձևով (ոքսիդներ, հալոգենային միացություն-
ներ, հիդրօքսիդներ, թթուներ, աղեր, հալոիդներ, մետաղներ և
այլ և այլն):

Քիմիական վորեն ռեակցիա կարող ե ունենալ մի քանի
տարբեր կատալիգատորներ, վորոնք վոչ միայն տարբեր ուժով
են ներգործում, այլ և կարծես ընարություն կատարելով ռեակ-
ցիային մասնակցող նյութերի միջև, բոլոր ննարավոր ռեակ-
ցիաների միջև, տարբեր ուղղությամբ են տանում ռեակցիան և
տարբեր պրոդուկտներ են գոյացնում միննույն յելանյութից, —
մի յերեսույթ, վոր նկատվում ե նաև ենզիմների դեպքում: Այս-
պես, որինակ, ամիակը, վորը կազմված ե ազոտից (N) և ջրած-

նից (H), վորոշ պայմաններում կարող ե քայլայվել իր բաղադրիչ մասերին (N և H): Ունուան ուսումնասիրել ե ամիակի քայլայումը տարբեր մետաղների ներկայությամբ և նկատել ե, վոր, որինակ, յերկաթն այդ քայլայման վրա ավելի մեծ ազդեցություն ունի, քան պղինձը, նույնիսկ այն դեպքում, յերբ վերցրած յերկաթը քանակով ավելի քիչ ե, քան պղինձը և ջերմաստիճանն ավելի ցածր ե, քան պղինձի դեպքում: Ապա, վոր պղինձն ավելի մեծ ազդեցություն ունի այդ նույն ռեակցիայի վրա, քան պղատինը, վոսկին, արծաթը:

Նայած գործադրվող կատալիզատորին և պայմաններին, ածխածնի սքսիդից (CO) և ջրածնից կարելի յե ստանալ հետեւյալ պրոդուկտները — մըջնալիդենիդ (HCOH), քացախաթթու (CH₃COOH), ալկոհոլներ, թթուներ (որ. իզոկարագաթթու և այլն), պարզ և բարդ եսթերներ, ալիդենիդներ և կիտոններ (որ. ացետոն), հեղուկ և գազային ածխաջրածիններ, շղթայաձև միացումներ և այլն: Շատ հետաքրքրական ե այն, վոր թվարկած այս բոլոր նյութերի ստացման ռեակցիաներն սկզբում ընթանում են միաժամանակ, իսկ հետո, ռեակցիայի ընթացքում (ավելի ճիշտ՝ իրար հաղորդող ռեակցիաների ընթացքում) շեղփում, բաժանվում են իրարից և տարբեր ուղղություններով են ընթանում:

Միենույն սպիրտից յերկաթե գորպես կատալիզատորի ազդեցությամբ դոյանում ե ալիդենիդ և անջատվում ե աղատ ջրածնին, իսկ ածխածնի ազդեցությամբ (500⁰—600⁰. ում) դոյանում են ջուր և եթիլենային ածխաջրածին (C_nH₂O):

Կատալիտիկ ռեակցիաների գործադրության բնագավառում վերջին շրջաննում մտցված ե մի շատ կարևոր նորություն՝ խառն կատալիզատորների կիրառում: Խառն կատալիզատորների ազդեցությունը քիմիական ռեակցիաների վրա, թեև նկատված եր վաղուց (որ. 1884 թ) և առանձին դեպքերում ժամանակին զարմանալի արդյունք ե ավել, սակայն նա ուսումնասիրության, փորձնական ստուգման յենթարկվեց միայն վերջին տարիների ընթացքում: Բանն այն ե, վոր շատ հաճախ կատալիտիկ ռեակցիաները շատ մեծ չափով արագանում, հեշտանում կամ նույն իրենց բնույթով միանգամայն փոխվում են, յերբ ռեակցիաներին վոչ թե մեկ կատալիզատոր ե ներկա, այլ մի քանի կատալիզատորներ միաժամանակ, վորեե առանձին-առանձին բոլորովին այլ կերպ են ազդում տվյալ ռեակցիայի արագության և ուղղության վրա: Որինակ՝ նիկելը, պղինձը, յերկաթը և այլն, առանձին-առանձին վերցրած, նպաստում են ջրային գազեց

բացառապես մեթանի ($C H_4$) գոյացմանն, իսկ վորոշ հարաբերությամբ կազմված խառնուրդով նրանք գոյացնում են բենզին, թեթև յուղ և այլ նյութեր:

Այս բնագավառում ևս խոշոր դեր խաղացին պատահական դիտողությունները: Կատալիզատորները շատ հաճախ գործ ենին ածվում վոչ միանգամայն մաքուր վիճակում, այլ վորոշ իներտ (անտարբեր) նյութերի վրա (պեմզա, ակտիվացրած ածուխ կիզելգուր և այլն) բաժանման համար վիճակում: Իներտ նյութերի գործադրության նպատակն եր անտեսել թանկարժեք կատալիզատորը (որինակ պլատին), նվազեցնելով նրա գործադրվելիք անհրաժեշտ քանակը, պահպանելով մակերեսի մեծությունն (ուրեմն և ակտիվությունն) անփոփոխ: Դիտողությունները ցույց տվին, վոր այդ «իներտ» նյութերն ևս հաճախ կատալիտիկ ազդեցություն են ունենալում ռեակցիաների վերաբերմամբ, նպաստելով վերցրած բուն կատալիզատորի գործին: Այսպիսով իներտ նյութերի գործադրությունը, բացի թանկարժեք կատալիզատորների խնայողություն մտցնելուց, մեծացրեց կատալիզատորի մակերեսը և շատ դեպքում նրա ազդեցման ուժը: Մկզբում վորպես կատալիզատորների կրողների գործադրության մեջ մտցրած «իներտ» նյութերը շատ դեպքում ակտիվացնող նյութերի դեր խաղացին, դարձան ռեակցիաներն «ուժեղացողներ» կամ: «ակտիվատորներ»: Ահա այս դիտողությունների հիման վրա յել սկսվեց խառն կատալիզատորների գործադրությունը: Մի քանի որինակ այդ բնագավառից: Նիկելի կատալիտիկ ակտիվությունն ուժեղանալում ե, յերբ նրան ավելացնում են աննշան քանակով ալումինոքսիդ: Ածխածնի ոքսիդից (CO) և ջրածնից, յեկաթե, ալյումինոքսիդի նիկելի առդեցությամբ մեթան (CH_4) գոյանալիս՝ ռեակցիան շատ ավելի թույլ ե ընդունում, քան այն ժամանակ, յերբ որինակ, նիկելի հետ վերցվում ե միաժամանակ նաև յերկաթը. ալյումինոքսիդը: Վերջապես հաջողվեց կարեսրություն ունեցող ամիակի (NH_3) սինթեզի ժամանակ առաջներում գործադրվող թանկարժեք ուրան (U_2) և ոսղիում (OS) կատալիզատորները փոխարինել յերկաթով, վորի ազդեցությունն ուժեղանալում ե շատ մետաղների և թթվածին պարունակող նյութերը խառնելով, որինակ՝ ալյումինոքսիդ, կալիումոքսիդ, յերկաթոքսիդ և այլն, մոլիբդեն (MnO) և նիկել (Ni), կորպալլա (Co) և պղինձ (Cu) և այլն: Մեթանոլի ((ֆայտի սպիրտ)) սինթեզի ժամանակ շատ ուժեղ եֆեկտ ե ստացվում, յերբ վորպես կատալիզատոր գործադրության մեջ ե մտցվում ցինկոքսիդի և քրոմոքսիդի խառնուրդը:

Մեթանի այբումը նիկելի 10% պլատինի ներկայությամբ՝ շատ ավելի արագ և տեղի ունենում, քան այդ յերկուսից յուրաքանչյուրի դեպքում առանձին-առանձին, և այլն:

Կատալիզատորների խառնուրդները կարող են կազմված լինել 2, 3, 4... կատալիզատորներից, վորոնք փոխադարձաբար ակտիվացնում են միմիանց («փոխագարձ ակտիվացիա»): Տեխնիկայում բոլոր կատալիտիկ պրոցեսների ժամանակ ներկայումս աշխատում են ուժեղացնող կատալիզատորներով:

Խառն կատալիզատորներ գործադրելիս անհրաժեշտ ե կատալիզատորների հատուկ ընտրություն կատարել, քանի վորոնքնական կատալիզատորի հետ ամեն մի նյութ չե վոր արագացնում և ոեակցիան: Հաջող ընտրության դեպքում խառն կատալիզատորների գործադրումը շատ հաճախ տալիս ե չտեսնված արդյունք:

Խառն կատալիզատորների գործադրության մի այլ տեսակն ել այն ե, վոր հայտնի նյութի ստացումը կամ քայլայումը կատարում են նախ մի կատալիզատորի ոգնությամբ, վորը պրոցեսը հասցնում ե մինչ վորոշ աստիճան, ապա նրա գործը շարունակում ե մի այլ կատալիզատոր, ոեակցիային տալով ցանկացած ուղղությունը կամ վախճանը:

Յերկու կամ մի քանի կատալիզատորներ իրար հետ միասին գործադրելիս վոչ միայն ուժեղանում և ոեակցիայի արագությունը, այլ և փոխվում ե նրա ուղղությունը, հետևաբար փոխվում ե ստացվող նյութը: «Հիմնական» կատալիզատորի և «ոգանդակ» նոր կատալիզատորի համատեղ աղղեցությամբ միևնույն յելանյութից այժմ (համատեղ ազդման դեպքում) գոյանում են նոր նյութեր: Ահա մի քանի որինակ. մինչև վերջին տարիներն ածխածին ոքսիգը կատալիզատորի ոգնությամբ ջրածնի հետ միանալով գոյացնում եր միայն մեթան (CH_4) գազը: Սակայն վերջին տարիների ընթացքում պարզվեց, վոր այդ ոեակցիայի ժամանակ կատալիզատորը թողնելով հիմնականում նույնը և նրան այս կամ այն նոր կատալիզատորն ավելացնելով՝ կարելի յե ոեակցիան տանել տարբեր ուղղությամբ և այդպիսով ստանալ բազմաթիվ տարբեր նյութեր (ալկոհոլներ, թթուներ և այլն): Վոլֆրամի օքսիդը մեծացնում ե կավահողի ակտիվությունը, իսկ կիրը համարյա վոչնչացնում ե նրա կատալիտիկ աղղեցությունը:

Չնայած այն բանին, վոր խառն կատալիզատորների գործադրությունը և՝ արդյունաբերության, և՝ լաբորատորիական փորձնական պրակտիկայում ներկայումս մեծ տեղ է գրավում,

այնուամենայնիվ մինչ այժմ յեղած նյութերը դեռ ևս հնարա-
վորություն չեն տալիս նախատեսներու, նախորոք հաստատա-
պես վորոշելու, թե վորես ոեակցիայի այս կամ այն ուղղու.
թյունը տալու համար ի՞նչ կատալիգատոր պետք ե գործադրել:
Զեռնոտու կատալիգատորը վորոշվում ե փորձնական վորոնում-
ներից, բազմաթիվ փորձերից հետո միայն (եմպիրիզմ): Պետք ե
հուսալ, վոր մոտ ապագայում քիմիկոսներին կհաջողվի ազա-
տագրվել եմպիրիզմի նաև այս գերությունից: Այն ժամանակ
քիմիական արդյունաբերության զարգացումը կընթանա ել ավելի
արագ ու հաջող՝ քան մինչեւ այժմ:

* * *

Կատալիգի բնորոշումը տալիս վերն ասվեց, վոր կատալիգա-
տորը ոեակցիային անմիջապես մասնակցություն չունի, այլ
միայն իր ներկայությամբ նպաստում ե ոեակցիային: Մակայն
հայտնի յեն բազմաթիվ դեպքեր, յերբ կատալիգատորն անմի-
ջապես վօրու մասնակցություն ունի ոեակցիային, թեև ոեակ-
ցիայի վերջում, ինչպես վերն ասվել ե, նա այնուամենայ-
նիվ մնում ե միանգամայն անփոփոխ (համենայն դեպս մինչ
այժմ մեզ հայտնի վորես միջոցով վորես փոփոխություն հայտ-
նաբերել չի հաջողվել): Այդպիսի դեպքերում ոեակցիայի ժա-
մանակ սկզբում գոյանում են այսպես կոչվող «միջանկյալ
նյութեր», վարոնց կազմի մեջ մտնում ե նայել կատալիգատորը.
ապա այդ միջանկյալ նյութերը վեր են ածվում վերջնական
պրոյուկտի և ազատ կատալիգատորի: Այդ տեղի ունի, որինակ,
ծծմբական կոչվող եթերի ստացման ժամանակ՝ ծծմբական թթու
կատալիգատորի հետ:

Կատալիտիկ ոեակցիաները պայմանավորվում են վոչ միայն
կատալիգատորի բնույթով (վիճակը, տեսակը), այլ և նրա քա-
նակով, այն ջերմասահճանով, վորի ժամանակ ընթանում ե ոեակ-
ցիան ինչպես և ճնշման չափով:

Կատալիգատորի քանակությունը հաճախ կարևոր նախապայ-
ման ե տվյալ ոեակցիան ավելի մեծ եֆեկտով տանելու համար:
Մակայն այդ նախապայմանն ամեն դեպքում չե՝ վոր նշանա-
կություն ունի. շատ դեպքերում կատալիգատորի քանակու-
թյունն եյական նշանակություն չունի, վորովհետև կատալիտիկ
ոեակցիաները կատարվում են միայն կատալիգատորի մակե-
րեսին, իսկ կատալիգատորի քանակի ավելացումը նույն չափով
չի ավելացնում նաև նրա մակերեսը: Ուստի կատալիգատորի
ակտիվությունն այնքան ավելի մեծ ե, վորքան մեծ և նրա

մակերեսը իսկ մակերեսը կարելի յե մեծացնել անգամ կատալիդատորի քանակությունն սկզբնականի համեմատությամբ պակասեցնելով: Առակցիաների արագության վրա ջերմաստիճանի ունեցած ազդեցության մասին բավականաչափ արդեն ասվել է վերբ:

Ի՞նչ վերաբերում է ձնշմանը, ապա պետք ե ասել, վորայդ նույնպես մեխն և այն կարեոր ֆակտորներից, վորոնք հոկայական ազդեցություն ունեն ուսակցիաների արագության, հաջողության վրա: Բազմաթիվ քիմիական սինթեզներ կատարվում են միայն կամ մեծ հաջողությամբ բարձր ձնշման պայմաններում: Որդանական միացությունների սինթեզի համար ճնշումը, վորպես ֆակտոր մտցրեց Վ. Ի. Խպատյեվը:

Մնացած ֆակտորներից լույսի, ուղարամանուշակագույն ճառագայթների ազդեցության մասին նույնպես վերը խոսել ենք, և նրանց վրա նորից կանգ չենք առնի: Հիշեցնենք միայն այնպիսի հանրածանոթ յերեսությունը (լույսի ազդեցությամբ կատարվող), ինչպես, օրինակ, արծաթի աղերի քայլայումը լուսանկարչական թերթիկի վրա, վորն ոգտագործվում է լուսանկարումներ կատարելու համար, ապա բույսի տերեի մեջ այդ ածեաթթու գաղից և արմատներով ծծած ջրից որդանական ամենաբարդ նյութերի սինթեզը և այլն:

* * *

Սկզբնական շրջանում, յերբ կատալիտիկ յերկություները (և կատալիդատորները) շատ չեին ուսումնասիրված, վորպես կատալիդատորներ գործ եյին ածվում մեծ մասամբ թանկարժեք, ազնիվ կոչվող մետաղները: Սկսած Դեվիլից և Դոբերայներից, յերկար ժամանակ գործադրվող համարյա միակ կատալիդատորներ պլատինը: Ուրիշ նյութեր կամ չեյին գործադրվում կամ գործադրվում եյին շատ քիչ դեպքերում: Նետազա ուսումնակրագույնները և փորձնական նյութերը պլատինը գուրս մղեցին իր գերիշտուղ դիրքից, և այսոր իրենց կարեորությամբ, գործադրությամբ առաջին տեղը գրավում են ավելի եժանագին մետաղները — նիկելը, յերկաթը և այլն:

Ահա մի քանի կարեոր կատալիդատորների համառոտ բնույթագիրը.

Պլատին. լայն գործադրություն ունի առանձնապես հիգրացման (ջրածին միացնելու) և ոքսիդացման (թթվածին միացնելու) ուսակցիաների ժամանակ, սակայն թանկարժեք ե: Յերկար ժամանակ $400 - 500^{\circ}$ տաքացվելու դեպքում կորցնում ե

իր կատալիտիկ ակտիվությունը։ Գործ ե ածվում զանազան ձևերով (վիճակով)։ Համեմատաբար հեշտ ե թունավորվում։

Վ. Ասիկի և արժաք. լայն գործադրություն չունեն, վորով-հետև սրանց կատալիտիկ ազդեցությունը կարճատե ե։

Ալյումին. նույնպես քիչ գործադրություն ունի, ի միջի այլոց գործ ե ածվում նաև վորպես ակտիվատոր։ Գործադրվում են նաև սրա աղերը, վորոնց մեջ քլորական աղն ($AlCl_3$) ամենից շատ գործադրվողն ե։

Ցինկ, կապար (արճիճ), կլայեկ. գործադրվում են զանազան ռեակցիաների ժամանակ (պարզ-փոքր մոլեկուլների խրտացում, թթվածինը միացումների մեջ ջրածնով փոխարինելը և այլն)։

Պղինձ. հաճախ հաջողությամբ գործադրվում ե ոքսիդացման ռեակցիաների ժամանակ վորպես լավ կատալիզատոր։ Համեմատաբար ավելի դիմացկուն ե թուների նկատմամբ։

Նիկել. իր գործադրության չափերով ամենակարենոր կատալիզատորներից մեկն ե, իսկ վորոշ զենքերում (որ. հիդրացման ժամանակ) ամենակարենոր կատալիզատորն ե։ Բացի հիդրացմանը նպաստելու բացառիկ հատկություն ունենալուց, նա արժեքավոր ե նաև խտացման և տարրալուծման ռեակցիաներն արագացնելու տեսակետից։ 750°-ից բարձր տաքացվելու դեպքում կորցնում ե ակտիվությունը։ Բացառիկ ակտիվությունը ունի ոքսիդից վերականգնված նիկելը։ Սրա առավելություններից մեկն ել իր համեմատաբար եֆան լինելն ե։

Ցերկար. թեև նիկելից ավելի պակաս չափով ե գործադրվում, բայց եֆան ե։ Ոքսիդից վերականգնված և մանրացած յերկաթը շատ դեպքերում կարող ե փոխարինել նիկելին, սակայն դժվար ե պատրաստվում։ Ցերկաթի համար ուժեղ ակտիվատոր ե մոլիբդենը։

Գործադրվում ե չհագեցած ածխաջրածինները (դրանց թը-վում նաև ացետիլենը) ջրածնով հագեցնելու և ռեակցիաների ժամանակ։ Լավ օքսիդացնում ե։

Ածուխ. ակտիվացրած (հատուկ ձևով մշակած) վիճակում գործադրվում ե մի շաբթ ռեակցիաների ժամանակ։ Գործադրվում ե նաև վորպես ակտիվատոր։ Իր գործնական նշանակությամբ ներկայում գգալի տեղ ե բռնում արդյունաբերության և տեխնիկայի շատ ճյուղերում (որ. եթիլեն ստանալու գործում, եթիլենը յելանյութ ե

Կավահող. գործադրվում ե որդանական քիմիայի ամենաբազմազան ռեակցիաների ժամանակ։ Պիտանի յե նաև վորպես ակտիվատոր։ Իր գործնական նշանակությամբ ներկայում գգալի տեղ ե բռնում արդյունաբերության և տեխնիկայի շատ ճյուղերում (որ. եթիլեն ստանալու գործում, եթիլենը յելանյութ ե

իպրիս կոչված ռազմական թունավոր նյութն ստանալու համար, ապա եթերի ստացման գործում, եթերն անհրաժեշտ է դեղորայք և բազմաթիվ չափաղանց արժեքավոր այլ նյութեր պատրաստելիս): Նպաստում և այսպիսի ածխաջրածիններ ստանալուն, վարոնք յելանյութ են արհեստական կառուչուկներ և կառուչուկանման զանգվածներ ստանալու համար: Նրա շատ արժեքավոր հատկություններից մեկն իր եժան լինելն եւ Գլխավոր թերություններից մեկը հեշտությամբ թունավորվելն եւ

Թթուներ. հաճախ կատալիգատորի դեր են կատարում, որ աղաթթուն և ծծմբական թթուն՝ եթեր ստանալիս. աղաթթուն հաջողությամբ խտացնում և վորոշ միացություններ (ալղենիդ):

Կիր, կրաջուր. կատալիտիկ աղղեցություն են գործում շատ ռեակցիաների վրա:

Չուր, գլուռքիներ (խոնավություն). շատ դեպքերում կատարում եւ կատալիգատորի դեր հայտնի յեն շատ ռեակցիաներ, վորոնք տեղի յեն ունենում միայն ջրի (խոնավության) առկայության գեպքում: Որինակը, յերկաթն առանց ջրի ներկայության չի սրսիդանում (ժանգուում): Չոր ջրածինը և թթվածինն իրար խառնված մինչ 1000° տաքացվելիս պայմանական տեղի չի ունենում, իսկ ջրային գոլորշների ներկայությամբ խառնուրդը պայմանական եւ արդեն 600° ժամանակի: Ջրային գոլորշների ներկայությունն անհրաժեշտ է նաև, որինակ՝ քլորակիր պատրաստելու ժամանակը: Ածխածինը և ֆոսֆորը միանգամայն թթվածնի մեջ չեն գառվում (չեն միանում նրանց հետ) և այլն:

Բացի հիշատակած այս նյութերից, վորակես կատալիգատոր գործադրվում են ուղիղ շատ պարզ ու բարդ նյութեր (որ, յոդ, քլոր, պեմզա, սնդիկ, աղեր և այլն), վորոնց վրա մենք կանգ չենք առնում:


Շատ գեպքերում կատալիգատորները վորոշ միացությունների վրա ազդում են այն կերպ, վոր այդ միացությունների մոլեկուլները մի քանի հատով կամ տասնյակով միանալով իրար, խտանալով (կոնդենսացիա) գոյացնում են ավելի մեծ մոլեկուլներ ունեցող նյութ, նոր միացություն: Կոնդենսացող նյութի մոլեկուլները կարող են մտնել նոր գոյացող նյութի մոլեկուլի մեջ կամ ամբողջությամբ, կամ մասամբ նախորոք քայլքայվելով մասերի:

Կոնդենսացման որինակ և մրջնալգենիդի ուղարկությունը (բույսի տերենի մեջ):

Յերկու բոլորովին տարբեր նյութեր նույնական կարող են կոնդենսանալ միասին և գոյացնել մի նոր նյութ։ Ա. Ե. Յիշի-բարին կավահող պարունակող խողովակի միջից անցկացնելով (330°) ացետիլեն և ամիակ ստացել ե՝



Ացետիլենը և ծծմբաջրածինը կավահողի ազդեցությամբ (նրա վրայով ակցկացնելիս) գոյացնում են թիոֆեն։



Ացետիլենը ջրային գոլորշիների հետ կավահողի ներկայությամբ գոյացնում ե ֆուրան ($\text{C}_4\text{H}_4\text{O}$) և այլն։

Վաղուց նկատվել ե, վոր գործադրվող կատալիտիկ ռեակցիաների ժամանակ հաճախ բոլորովին կամ մասամբ ընկնում ե կատալիզատորի ակտիվությունը, նրա ներգործելու ընդունակությունը։ Ուսումնասիրությունները պարզեցին, վոր այս յերկույթը պայմանակիրվում ե մի քանի պատճառներով։ Դեռևս Turgereg-ը 1824 թ. գիտեր, վոր վորոշնույնիսկ հետքերը չեզոքացնում, թունավորում են մանրացրած պլատինի կատալիտիկ ազդեցությունը։ Ալյակես եյին ազդում, որինակ, ծծմբածխածինը (CS_2), ծծմբաջրածինը (H_2S) և այլն։ Կատալիզատորի նման թունավորում նկատվում ե նաև կոնտակտային յեղանակով ծծմբական թթու (H_2SO_4) ստանալիս, բավական ե, վոր ռեակցիայի մեջնորոտում լինեն մնդիկի հետքեր, ֆուֆոր, մանավանդ անտիմոն (AS)—կատալիզատորը թունավորվում է։

Թույները կամ բացասական կատալիզատորները գեռևս լավ չեն ուսումնասիրված, թեև կոնկրետ որինակներ շատ են հայտնի։ Մրանց թվին ե պատկանում նաև մեզ արդեն ծանոթ ջրածին պերոքսիդի (H_4O_2) քայլայման շատ մեծ չափով թուլացումը, ջրածին պերոքսիդի գոյանալը՝ նրան մի քիչ թեկուզ իր կշռի $1/10000$ -ական մասով թթու ավելացնելիս, կամ այն փաստը, վոր ֆենիլհիտրազենը խանգարում ե կառուչուկի վուլկանիզացիային (ծծումբով մշակելուն), վոր սպիրտը խանգարում ե քորոֆորմի ինքնաբերաբար ոքսիդանալուն և փոսդեն դառնալուն և այլն։

Շատ հետաքրքրական ե այն, վոր միևնույն նյութերը կարող են հանդես գալ յերբեմն վորպես դրական, յերբեմն ել վորպես բացասական կատալիզատորներ։ Այսպես՝ յերկաթը ժան-

դոտելու ժամանակ ջուրը (խոնավությունը) կատարում ե դրական կատալիզատորի դեր, նպաստելով յերկաթի ժանդոտելուն, իսկ նիկելի ոքսիդը ջրածնով վերականգնելիս կատարում ե բացասական կատալիզատորի դեր (խոնավ ջրածինն ավելի դանդաղ ե վերականգնում նիկելի ոքսիդը, քան չոր ջրածինը):

Բանի վոր կատալիզատորի ակտիվ ազդող մասը նրա մակերեսն ե, ապա ուրեմն նրա ակտիվության նվազումը պետք է բացատրել ռեակցիայի ժամանակ կատալիզատորի մակերեսի հետ կամ նրա վրա կատարված ինչ վոր փոփոխությամբ: Այդ ինչ վոր փոփոխությունը կարող ե լինել նաև և առաջ այն, վոր կատալիզատորի մակերեսը կարող ե ծածկվել ռեակցիայի ժամանակ գոյացող վորոշ նյութերով (որ. խեժ, մուր), վորոնք և կատալիզատորի մակերեսը կզրկեն ազդելու հնարավորությունից:

Ապա այդ փոփոխությունը կարող ե լինել այն, վոր կատալիզատորի մակերեսը կլլանի (ադսորբցիա) վորոշ նյութեր, վորոնք նույնպես կիսանդարեն նրան՝ ակտիվ ներգործելու ռեակցիայի վրա: Նման դեպք ե տեղի ունենում, որինակ, պլատինի հետ — ածխածնի ոքսիդով թունավորվելիս: Վերջապես այդ փոփոխության պատճառը կարող ե լինել ռեակցիային մասնակցող կամ ռեակցիայի ընթացքում գոյացող նյութերից և կատալիզատորից քիմիական միացության գոյանալը:

Իրականության մեջ յերեք տիպի դեպքերն ել տեղի յեն ունենում:

Այն հարցին, թե վոր նյութերն են թույնիր հանդիսանում կատալիզատորների համար, պետք ե պատասխանել, վոր այդ կախված ե ինչպես ռեակցիաների, նույնպես և կատալիզատորների ընույթից, տեսակից: Այնպես, ինչպես մի շարք ռեակցիաների համար կան ընդհանուր և մասնավոր կատալիզատորներ, այդպես ել կան ընդհանուր և մասնավոր թույներ: Առանձին դեպքերում վորպես թույն են ազդում քորի, բրոմի, յոդի, ծծումբի նույնիսկ հետքերը: Ուրիշ դեպքերում, որինակ՝ ձեթերը ճարպ դարձնելիս, ռեակցիային խանգարում են (թունավորում են) կարմիր ֆոսֆորը, պլիցերինը, յերկաթը, կապարը, ցինկը: Համարլա բոլոր կատալիզատորների համար թույն են հանդիսանում ծծումբը, ֆոսֆորը, անտիմոնը և նրանց միացությունները: Սրանք այնքան ուժեղ թույներ են, վոր ազդում են նաև ամենաանջան քանակով լինելու դեպքում: Ուժեղ թույներից են նաև ծծմբայրածինը, ցիանջրածնաթթուն, յոդը,

սնդիկը, ծծմբածխածինը, փոսֆորը, ածխածին ռքսիդը։ Միջակ թույներից են՝ անիլինը, բրոմը, քլորջրածինը, թրթնջկաթթուն, նաշատիրը (NHC_{Cl}) և այլն։

Նկատված ե նաև, զոր կատալիգատորների թունավորումը կարող ե լինել ավելի կամ պակաս տեսական, կայուն և ժամանակավոր։

Կայուն կամ տեսական թունավորման դեպքում կատալիգատորի ակտիվությունը չի վերականգնվում նաև այն ժամանակ, յերբ ռեակցիոն միջավայրից հեռացվում են թույները։ Նման թունավորում տեղի ունի ամիակի սինթեզի ժամանակ՝ յերկաթի հետ, յեթե ռեակցիայի միջավայրում կան ծծմբային միացություններ. նիկելի հետ — հիտրոդենիգացիայի (ջրածին միացնելու) ժամանակ և այլն։ Ժամանակավոր կամ անցողիկ թունավորումն անցնում է, յերբ ռեակցիայի միջավայրից դուրս են բերվում թույները և այնտեղ մտցվում ե շթունավորված նոր նյութ։ Թույնն «ազատ ե թողնում» կատալիգատորին և հեռանում, զորի չնորհիվ ել վերականգնվում ե կատալիգատորի ակտիվությունը։ Վորպես որինակ կարելի յե հիշատակել պլատինի թունավորումն ածխածնի ռքսիդով շառաչող գաղի ռեակցիայի ժամանակ, յերկաթի թունավորումը ջրով (իոնավություն)՝ ամիակի սինթեզի ժամանակ — 500°ում (յերբ պակասում ե). հենց զոր սիստեմի մեջ մտցվում են չոր ազոտ և չոր ջրածին, յերկաթի ակտիվությունն իսկույն վերականգնվում ե։

Նման թունավորում տեղի յե ունենում նաև այն դեպքերում, յերբ ռեակցիայի պրոդուկտն արգելակում ե նույն այդ ռեակցիայի ընթացքը, վորը շարունակվելու համար պահանջվում ե ռեակցիայի միջավայրից հեռացնել այդ պրոդուկտը։ Այսպիսի յերկույթ նկատվում ե նաև ենդիմատիկ շատ պրոցեսների ժամանակ։

Կատալիգատորների տեսական կամ ժամանակավոր թունավորումը կախված ե վոչ միայն թույնի բնույթից, այլև իրենից՝ կատալիգատորի տեսակից։ Միևնույն թույնը մի դեպքում կարող ե թունավորել (վորևէ կատալիգատորի) տեսականորեն, կայուն կերպով, ուրիշ դեպքում (մի այլ կատալիգատորի) — ժամանակավորապես, անկայուն կերպով։ Այդ կախված ե ուրեմն կատալիգատորի բնույթից։ Որինակ՝ մինչդեռ ջրային գոլորշիները յերկաթ կատալիգատորը ամիակի սինթեզի ժամանակ՝ թունավորում են ծալանակավորապես, ուրանի կարբիդ կատալիգատորը նույն ամիակի սինթեզի ժամանակ՝ թունավորում են ՏԵՎականութեան, կայուն կերպով։ Նույնն ե անում նաև ածխածնի ռքսիդը։

Այս, ինչպես և թանկության պատճառով ամիակի սինթեզի պրակտիկայից ուրան կարբիտը դուրս է մղվել, թեև այլ տեսակետներից նա ավելի շատ առավելություններ ունի՝ վորպես կատալիզատոր:

Ամեն մի կատալիզատորի համար վորպես թույն կարող են հանդես գալ մի շարք նյութեր, վորոնք սակայն միևնույն արագությամբ և միևնույն տևականությամբ չեն թունավորում տվյալ կատալիզատորը, այլ ավելի կամ պակաս արագ, ավելի կամ պակաս տևողությամբ։ Միևնույն կատալիզատորի համար թույն հանդիսացող տարրեր նյութերը համատեղ ներգործելիս հաճախ վոչ միայն ավելի ուժեղ չեն թունավորում կատալիզատորը, այլև ընդհակառակը չեղորացնում են միմյանց և կատալիզատորի ազգեցությունը (ուեակցիայի վրա) ավելի կամ պակաս չափով անփոփոխ են թողնում։ Ուրեմն մի կատալիզատորի թույներից մեկը (կամ մի քանիսը) թույն եւ նաև նույն կատալիզատորի մի այլ թույնի (կամ թույների) համար Որինակ՝ ըստ Թայգիլի և Թելլորի — ամիակն ազոտական թթու գարձնելիս պլատին կատալիզատորի համար ծծմբաջրածինը թույն ե, և նրա 1—2%-ը յելքն իջեցնում ե 10%-ով։ Ավելի ուժեղ թույն ե ֆուֆորական ջրածինը, վորի 0,00002%-ը յելքը պակասեցնում ե արգեն 20%-ով։ Յեթե ուեակցիայի միջավայրում միաժամանակ գտնվում են 0,00002% ֆուֆորական ջրածին և 0,38% ացետիլեն, ապա յելքն ընկնում ե 93%—մեկ ժամկա ընթացքում։ Իսկ յեթե այդ ժամանակ ավելացվի 0,02% ծծմբաջրածին, ազոտական թթվի յելքն սկսում ե մեծանալ և մոտ յերկու ժամ անցած—70%-ից հասնում ե 89%-ի։ Այս բոլորից այժմ պարզ ե, թե վորքան մեծ գործնական նշանակություն ունի մաքուլ կատալիզատորներ գործազրելը կատալիտիկ ուեակցիաների ժամանակը։ Յեզ թեև շատ թույների համար հայտնի յեն հակաթույներ, այսուամենայնիվ, հասկանալի պատճառով, տվյալը լավ է ունենալ մախուր կատալիզատոր և ուեակցիայի մեջ մտնող մախուր նյութեր։ Քան նրանց հետ ուեակցիայի միջավայրի մեջ մացնել կողմանակի, ուեակցիային խանգարող նյութեր — թույներ, և մտածել այդ թույները թունավորելու (չեղորացնելու) միջացների մասին։

* * *

Կատալիտիկ յերեսույթները ընության մեջ կատարվում են ամենուրեք, անընդհատ և միշտ նրանք բնական յերեսույթներ են։ Ճիշտ այնպես, ինչպես անհնարին և պատկերացնել բուսա-

կան և կենդանական որդանիդմների մեջ կատարվող կենսական պրոցեսներն առանց ֆերմենտ-ենզիմների, այդպես ել անհնարին և պատկերացնել քիմիան, քիմիական պրոցեսներն առանց կատալիզատորների, կատալիզի:

Իր զարգացման շրջանն սկսելով *XVIII*-րդ դարի վերջից, քիմիական արդյունաբերությունն արագորեն սկսեց զարգանալ նաև Անգլիայում, ապա նաև մյուս յերկրներում, առանձնապես Գերմանիայում և ԽՍՀՄ-ում: Անգլիայի, Ֆրանսիայի և մյուս մեծ յերկրների աճող տնտեսությունն իր սուր պահանջներով (նվաճող զաղութների և կիսազաղութների շուկաների տիրապետում, այստեղից արտահանվող հումքի վերամշակում և այլն) զարկ եր տալիս քիմիական արդյունաբերությանը (սոդա, ներկեր, ապակի, սապոն և այլն), իսկ վերջինս ել զարգանալով իր հերթին խոշոր չափով առաջ եր մղում առետուրը, կապիտալիստական տնտեսությունն առհասարակ: Մակայն այդ ամեննեին չեր խանգարում, վոր սոդա ստանալու յեղանակը հնարող հոչակավոր լեզվանը, վորը զարգացող բուրժուազիային վոսկու կույտեր դիզելու նոր հնարավորություններ տվեց, մեռներ ծալրահեղ կարիքի մեջ՝ չքայլորների ապաստարանում: Պակաս «պատվի» չարժանացավ նաև վոչ պակաս հոչակավոր նամինը, ողի ազոտը սինթետիկորեն կապելու, ազոտական ամենակարևոր նյութերն ստանալու յեղանակի հեղինակը, վորն իր այդ աշխատանքով գերմանական իմպերիալիզմին անդնահատելի ծառայություն մատուցեց 1914—1918 թ. պատերազմի ժամանակ: «Գիտության սիրահար» և «կուլտուրայի կրող» Փաշիստական Գերմանիան արտաքսեց նրան Գերմանիայից, իսկ նրա հետ նաև տամնյակ ու հարյուրավոր այլ գիտնականների: Բամբակի գործվածքների արդյունաբերության զարգացումը մի նոր խթան հանդիսացավ քիմիական արդյունաբերության զարգացման համար, քանի վոր նաև հակայական, մինչ այդ շտեսնված չափերով պահանջում եր վոչ միայն ներկեր, այլ և այնպիսի կարևոր նյութեր, ինչպես, որինակ՝ ծծմբական թթուն, սոդան, քլորակիրը և այլն:

Զարգացան սոդայի, թթվի, քլորակիրի, անիլինի, ալիդարինի, ինոդիգոյի, արհեստական մետաքսի, իսկ այժմս ել զարգանում ե արհեստական կառուչուկի և այլ բազմաթիվ շատ արժեքավոր նյութերի արդյունաբերությունը: Այդ զարգացումն այնտեղ հասավ, վոր, որինակ, գերմանական ինդիգոյի ներմուծումը 1896 թ. 20,7 միլիոն մարկի գումարից 1911 թ. հասցեց 450 000 մարկի, իսկ արտանանությունը նույն մական-

կամիջոցում 6,3 միլիոն մարկից հասցեց մինչ 41,8 միլ. մարկի, չնայած վոր այդ ժամանակամիջոցում ինդիգոյի գինն ընկազ ավելի քան 5 անգամ։ Յեզ այդ՝ չնորհիվ ինդիգոյի ստացման սինթետիկ (արհեստական) յեղանակի հայտնագործման։

Այստեղ մեկ առ մեկ թվել այն բոլոր, թեկուղ և կարևոր նվազումները, վոր ունեցել ե քիմիան—անհնարին եւ Բավական և ասել, վոր ներկայումս արհեստականորեն պատրաստվող դեղերի աեսակների թիվը 5000-ից ավելի յէ, իսկ միայն որգանական միացությունների թիվը ավելի քան 300 000 եւ Զկա արդյունաբերական փորեն ճյուղ, վորի մեջ քիմիան խոշոր դեր չխաղա. շինարարական նյութերի, ապակու, կոշիկների, սննդամթերքի, ներկերի, թղթի, տեքստիլ և բազմաթիվ այլ արդյունաբերական ճյուղերում քիմիան վճռական դեր ե կատարում։

* * *

Կատալիզի վերաբերյալ մեր բացատրությունն ավելի կոնկրետացնելու նպատակով անհրաժեշտ ենք գտնում շատ համառոտ նկարագրել կատալիզի մի քանի կարևոր գործադրությունը տեխնիկայում։


1. Ամիակի սինթեզն ազոտից և ջրածնից. ողի ազոտը ջրածնի հետ կապելը—ամիակի ստացումը չափազանց կարևոր նշանակություն ունի վաղջ ժողովրդական տնտեսության համար։ Սինթետիկ ամիակի տարեկան արտադրությունը հասնում է 1 միլիոն տոննի։ Սինթետիկորեն ստացվող բոլոր նյութերն իրենց տնտեսական նշանակությամբ նսեմանում են այս պրոցեսի համեմատությամբ։ Ֆրից Հաբերի հաշվիներով ամիակի և ազոտային այլ միացությունների սինթեզից ստացված պրոցեսաների իրացումը տարեկան հասնում է 1 միլիարդ վոսկի մարկի։

Ամիակի սինթեզի համար գործնականում ամենալազ կատալիզատորը յերկաթն ե, յերբեմն քիչ քանակով այլ ակտիվատորների (որ ալումինոքսիդ, պոտաշ) հետ միասին։

Այս կատալիզի ժամանակ ճնշումը մեծ դեր է խաղում։ Մինչդեռ 200 մթնոլորտ ճնշման ժամանակ ստացվող ամիակի յելքը կազմում է տեսականի 9%, 600—900 մթնոլորտ ճնշման ժամանակ նա հասնում է 30%-ի։

Ամիակը տեխնիկայում գործադրվում է ներկերի արդյունաբերության մեջ ազոտական թթու ստանալու և շատ ուրիշ նպատակներով։

2. Ազոտական թթու ամիակից, ողի կամ թթվածնի և ամիակի խառնուրդը վորոշ ջերմաստիճանում ($500-600^{\circ}$) պլատին կատալիզատորի ներկայությամբ գոյացնում ե ազոտական թթու:



Ուեակցիան արագությամբ թունավորվում ե ծծմբաջրածնի ներկայությունից:

Ազոտական թթուն լայն գործադրություն ունի արդյունաբերության բազմաթիվ բնագավառներում, այդ թվում նաև պայթուցիկ նյութերի բնագավառում, վորի պատճառով ել նրա պահունչը շատ մեծ ե:


3. Ծծմբական թթու, սրա ստացման մասին մանրամասն խոսվել ե վերը:

Կոնտակտային յեղանակով ծծմբական թթվի արտադրությանը չափազանց աճել ե և արդեն 1929 թ. ըստ վորոշավայրների, հասնում եր մոտավոր հաշվով մինչեւ 5 միլիոն տոննի:

Ինչպես վերն ասվել ե, կատալիզատորն աղոտի ոքսիդն ե:


Գործադրվում ե այլ թթուներ (աղաթթու, ազոտական թթու և այլն) ստանալու, ծծմբաթթվական աղերի, պարարտանյութերի (սուլերֆոսֆատի), սողայի, դինամիոդի, արհեստական մետաքսի, նետրոբենզոլի, ներկերի արտադրության մեջ, հում նավթը մաքրելու համար և այլն:

4. Մրցնալիենիդ՝ մեթանից, փայտի սպիրտից ստացվում է փայտի սպիրտի գոլորշիների և ողի խառնութելը պղինձ կատալիզատորի վրայից անցկացնելիս, կամ մեթանից:



Սուը հոտով գաղ եւ Զօրի մեջ լուծված — կոչվում ե ֆոլմալին: Գործ ե ածվում ախտահանության (շենքերի, փեթակների), կաշիները դաբաղելու նպատակներով, բժշկության մեջ, տեխնիկական բազմաթիվ սինթեզներ կատարելու մի շարք կարևոր նյութեր ստանալու համար:


5. Ինդիգո, առաջին հաջող մինթեզը յեղել ե նավթալինը ծծմբական թթվով նախորդք ֆտալաթթու դարձնելը



վորակես կատալիզատոր գործադրելով սնդիկը, $100-300^{\circ}$ պայմաններում:

Ամենաարժեքավոր ներկերից մեկն եւ հսկայական գործադրությունը ունի 1913 թ. միայն Գերմանիան արտադրել եւ 10 միլիոն կիլո սինթետիկ խնդիրո, փորից 8 միլիոն կիլոն արտահանել եւ այլ յերկրները Խնդիրոն ներկայումս ստացվում եւ անիլինից Հետաքրքրական եւ նշել վոր ինդիգոյի սինթեզի ձեռնուու յեղանակ գտնելու համար ծախսվել եւ 20 միլ. վոսկի մարկ, իսկ յեղանակը գտնվել եւ պատահմամբ՝ ջերմաչափը փորձի ժամանակ կոտրվելու շնորհիվ (ջերմաչափի միջից սնդիկը կատարել եւ կատալիգատորի գեր):


6. Ս. Յիլին նիւրո բենզոլից. ստացվում եւ նիւրոբենզոլի վերականգնումից (թթվածինները ջրածիններով փոխարինելուց):



Վորավես կատալիգատոր գործադրում են գանազան կատալիգատորներ (որինակ՝ յերկաթ, արծաթ, վոսկի, վորոնց մեջ ամենալավը կայեկն ե):

Անիլինը քիմիական արդյունաբերության ամենակարևոր նյութերից մեկն եւ հսկայական չափերով գործադրվում եւ ներկեր պատրաստելու, պայթուցիկ և այլ նյութեր ստանալու համար:

7. Փայտի սպիրտ՝ ածխածնի ոքսիդից. ստացվում եւ ածխածնի ոքսիդի և ջրածնի միացումից, բարձր ջերմաստիճանում ($300—400^{\circ}$) և բարձր ճնշման պայմաններում:



Վորավես կատալիգատոր գործադրվում եւ ցինկի կամ այլ մետալների ոքսիդը:

Լայն գործադրություն ունի վորավես լուծիչ, գեղորակի ներկերի ու լաքերի արտադրության մեջ:

8. Հեղուկ յուղերի (ձեթ) հիդրօգենիզմիան. հեղուկ յուղերն իրենց քիմիական կազմության առանձնահատկությունների շնորհիվ (հագեցած լինելը) ընդունակ են իրենց ջրածին միացնել և դրա շնորհիվ պնդանալ:

Այսպես՝

Քունջութի ձեթը հալվում եւ—	5° -ում, հիդրացրածը	$+ 63,5^{\circ}$ -ում
Կտավիատի »	$- 16^{\circ}$ -ում	» $+ 68,0^{\circ}$ -ում
Զիսն յուղը »	$- 10^{\circ}$ -ում	» $+ 68,0^{\circ}$ -ում
Դերչակի »	$- 18^{\circ}$ -ում	» $+ 80,0^{\circ}$ -ում

Հեղուկ յուղերից պատրաստված պինդ պրոպուկաները (ճարպերը) գործ են ածվում. սապանի, մոմի, մարդարինի արտադրության համար և չունեն ձեթերի անդուրեկան համա ու հոտը:

Զեթերի հիդրոգենիզացիան լայն գործադրություն ունի: Վորպես կատալիզատորներ գործադրվում են նիկելը, պղինձը, յերկաթը, պղատինը, կոբալտը և այլն, վորոնց մեջ ամենալավը նիկելն ե:

Ներկայումս հիդրոգենիզացվող ձեթերի տարեկան քանակը համառում է 300 000 տոննի:

9. Նավթային ածխացրածինների կրեկինգը. ինչպես հայտնի յե, հում նավթը մի շաբաք ածխաջրածինների մի խառնուրդ ե (գազեր, հեղուկներ, և պինդ նյութեր՝ լուծված իրար մեջ), վոր կարելի յե բաժանել իրարից. այդ ձևով ստացվում են սովորական նավթը (կերոսին), բենզինը, մազութը, պարաֆինը և այլն, վորոնք նույնպես բարդ ածխաջրածնային միացություններ են:

Բարձր ջերմաստիճանում այդ ածխաջրածինները քայքայվելով գոյացնում են ավելի պարզ, ցածր յեռման կետ ունեցող (ինչպես բենզինը) ածխաջրածիններ, «արհեստական» բենզին:

Պարզ ե, վոր բարձր յեռման կետ ունեցող թանձը ածխաջրածիններն ավելի պարզ, ցածր ջերմաստիճանում յեռացող ածխաջրածիններ (բենզին) դարձնելը ներկայումս հսկայական նշանակություն ունի (տրակտորների, ավտո-ավելո արդյունաբերության արագ զարգանալու կապակցությամբ): Այդ ռեակցիան կիրառվում է նավթային արդյունաբերության մեջ և հայտնի յե կրեկինգ պրոցես անունով: Այս պրոցեսը նույնպես հայտնաբերված է պատահաբար:

Կրեկինգ պրոցեսի ընթացքում, բացի բենզինից ստացվում են նաև մի շաբաք կարևոր այլ նյութեր (արոմատիկ միացություններ):

Ամենահարմար կատալիզատորները վերականգնված մետաղներն են—պղինձը, պղատինը, ալումինը և առանձնապես նիկելն ու յերկաթը, ապա ցինկովդը և այլն:

Թե վորքան կատարելագործվել ե կրեկինգ պրոցեսը վերջին տարիների ընթացքում, այդ յերառում ե հետևյալ մի քանի թվերից. 100 լիտր վերամշակվող նավթից ստացվում եր բենզին՝ 1909 թ.—11 լիտր, 1919 թ.—25,5 լիտր, 1929 թ.—44 լիտր, 1930 թ.—47 լիտր:

Մի շաբաք միջոցառութեարի շնորհիվ հում նավթից կրեկինգի յեղանակով ստացվող բենզինի %-ը կարելի յե հասցնել մինչև 75-ի:

1930 թ. ՀԱՄՆ-ում աշխատում եյին 2000 կրեկինգ գործարաններ, վորոնք որական վերամշակում եյին 240 000 տոնն նավթ—վերջինս բենզին դարձնելով:

Վերջապես, բենգինի տարեկան ընդհանուր պրոդուկցիայի մոտ 30%-ը, վորը հավասար է 30 միլիարդ լիտրի, ստացվում է կրեկինդի միջոցով:

10. Ցիանամիդ՝ ողի ազոտից յեվ կարբիդից.

Այս նյութի սինթեզի համար գործածվող կարբիդի քանակը տարեկան 700 000 տոնն է, վոր արտադրվող կարբիդի կեսն ե կազմում:

Սինթետիկ ամիակի արդյունաբերության զարգացումը (ստացվող պրոդուկտները վորպես պարարտանյութ գործադրելու համար) չի կանգնեցնում ցիանամիդի արտադրության զարգացումը: Այսպես:

Ցիանամիդ արտադր. եր	1924 թ.	1927 թ.
Գերմանիայում	200 000	տոնն
Լեհաստանում	51 900	»
Շապոնիայում	58 900	»
Ֆրանսիայում	44 000	»
		58 000

Բելգիայում ցիանամիդի տարեկան սպառումը կազմում էր 1913 թ. — 3 250 տոնն, իսկ 1928 թ. — 33 300 տոնն, թեև մեծ չափով աճել ե նաև ազոտային մյուս պարարտանյութերի սպառումը:

Ցիանամիդը, բացի վորպես ազոտային լավ պարարտանյութ գործադրվելուց (նրա մեջ կալված ազոտի %-ը հավասար է 18—22), ծառայում ե նաև վորպես յելանյութ մի շարք այլ նյութեր ստանալու համար: Նրանից ստացվում են վորոշ արտածելիներ, վորոնք գործադրվում են հանքերից վոսկին հանելու համար: Ցիանամիդի սինթեզի համար լավ կատալիզատոր համարվում են կալցիումի քրորիդը և կերակրի աղը:

ԽՍՀՄ ցիանամիդի գործարաններից մեկը կառուցված ե կիրովականում, եժան կարբիդի բազայի վրա:

11. Սպիրտ փայտից, սովորական սպիրտը, բացի վորպես խմիչք գործածվելուց (ողի, կոնյակ և այլն), ունի շատ մեծ գործադրություն նաև տեխնիկայում լաքեր, ներկեր պատրաստելու համար, բժշկության մեջ և այլն նաև ավելի ու ավելի մեծ գեր ե ստանում նաև վորպես վառելիք — ներքին այրման մեքենաների մեջ:

Բացի մրգերից և հացահատիկներից սպիրտ ստանալու յեղանակներից, ներկայում հայտնի յերկու այլ յեղանակ:

ա) Փայտից. այս յեղանակի կարևորությունն այն է, վոր վորպես հումուլիթ ոգտագործվում են սղոցարանների և փայ-

-տամշակման գործարանների անարժեք թափթփուկները (թեփ, տաշեղ), վորոնք այդ գործարաններում յերբեմն այնքան շատ են կուտակվում, նոր նրանց դուրս տանել թափելը մինչև այժմ ավելորդ և անոգուտ գլծյալեր պահանջում: Ապա՝ այդ յեղանակը կարելոր են նաև ան տեսակետից, վոր մնադի համար պիտանի նյութերը (կարտոֆիլ, հացահատիկ և այլն) կարող են այդ նպատակի համար չվերամշակվել և ինսայվել:

ԽՍՀՄ-ում ներկայումս արդեն աշխատում են փայտից սպիրտ արտադրող գործարաններ: Մեկ տոնն փայտանյութից ստացվում ե 240 լիտր 96° սպիրտ (նույն քանակի փայտից ստացվում են 50% շաքարներ):

բ) Ացետիլենից, վորն ստացվում ե կալցիումի կարբիդից, Այս ժամին խոսք յեղել ե վերը:


Ինչպես տեսմում ենք, կարբիդը (ացետիլենը) շատ մեծ գործադրություն ունի. այդ յերեսում ե նաև հետեւյալ թվերից.

Կարբիդի համաշխարհային արտադրությունը 1913 թ. կազմում եր 400.000 տոնն, իսկ 1929 թ.—1 400 000 տոնն:

12. Անթրոքիկ կառչուկ, վորպես յելանյութ ծառայում են սպիրտը, ացետիլենը (կարբիդից), նաև թամբթերքները: Սրանցից առաջինը — սպիրտը — ամենաթանկ յելանյութն եւ:

Ացետիլենից կառչուկ պատրաստելիս՝ նրանից նախ պատրաստում են վինիլացետիլեն (C_4H_4 կամ $HC \equiv C - CH = CH_2$), վորն անգույն հեղուկ ե. նա կառաջիպատորի ներկայությամբ տաքացվելիս հեշտությամբ դառնում ես կզբում — յուղանման մի նյութ, ապա պնդանում ե և դառնում ռետինանման մի մարմին:


Վինիլացետիլենից, նրան քլոր ջրածին միացնելով, ստացվում ե շատ արժեքավոր մի նյութ, վորը կոչվում ե էլորոպեն:




Էլորոպենը շուտ յեռացող անգույն հեղուկ ե. սովորական ջերմաստիճանում աստիճանաբար խտանում ե և նախ դառնում ե դրնդողանման թափանցիկ մի զանգված, ապա դառնում ե դեղնագույն, լավ ձգվող (ճիլ), փափուկ կառչուկին նման մի մարմին: Էլորոպենն արհեստական կառչուկն ավելի լավ վորակի յե, քան ընական կառչուկը—ավելի քիչ ջուր ե կլանում (անթափանց ե), հեշտությամբ չի ուռչում լուծիչների մեջ, ալինի անթափանց ե գաղերի համար, շատ դիմացկուն եւ:

Եերևանում կառուցվող սինթետիկ կառչուկի գործարանն արտադրելու յե հենց այդպիսի քլորոպրեն:

Ացետիլենից ստացվող կառչուկի արտադրության ընթացքն այս սխեման է:



(քլորոպրենի ստացումը):



(քլորոպրեն կառչուկի գոյացումը):

Վորպես կատալիզատոր գործադրվում են պղնձի և այլ մետաղների աղերը:

Կառչուկի աարեկան սպառումն արագորեն աճում է և արդին 1929 թ. կազմում եր 600 000 տոնն՝ ամբողջ աշխարհում։ Այդ սպառումն առաջնայում անհամեմատ ավելի յետիւու:

Կառչուկը գործադրվում է ամենաբազմազան քնարավառներում. այդ նյութից են պատրաստվում կրկնակոշիկներ, ավտոմեխնիկների ծածկոցները, բժշկական ձեռնոցները, ելեկտրական լարերի մեկուսիչները, հակադաղերը, պլաստիկ մասսաները և այլն։ Կառչուկի հաջող սինթեզը—օրգանական կատալիզի հաղթարշավի արդյունքն է. իր ժողովրդատնտեսական նշանակությամբ կառչուկը հավանորեն առաջ կանցնի նաև ամիակից (նրա սինթեզից):

* * *

Ժամանակակից քիմիան քայլ առ քայլ, մեկը մյուսի հետից, նվաճում է մեծագույն վարպետի — ընության — գաղտնիքները, նրա զենքերը, նրա պրոդուկտներն արհեստականորեն ստանալու, նրանց այլ սինթետիկ նյութերով փոխարինելու գիտությունը։

Արտադրության բոլոր քնարավառներում և աշխատանքի բոլոր պայմաններում (խաղաղ, թե պատճրագմի ժամանակ — այդ մինչույն ե) նա հակայական գեր և խաղում և հայտնի իմաստով քիմիայի զարգացումը վորենե յերկրում—այդ յերկրի անտեսական զորության, նրա պաշտպանումակության կարևոր ցուցանիշներից մեկն եւ։

Կատալիզը քիմիայի քնարավառում խաղում է, ինչպես մենք այդ տեսանք, չափազանց կարենը դեր, և ներկայումս քիմիա-

կան վորեւ լուրջ պրոցես պատկերացնել առանց կատալիզի —
անկարելի յեւ:

Սակայն կատալիզի բնագավառում մինչ այսոր ել տեսու-
թյունը հետ ե մնում պղակտիկայից, այդ պատճառով ել պրակ-
տիկան կույր ե առանց տեսության: Տեսության այս յետ մնալլ
ներկայումս առանձնապես ավելի յեւ զգացվում մեզ մոտ, քանի
վոր մեր սոցիալիստական պղակտիկայի կողմից տեսությանը
(այդ թվում և կատալիզի տեսությանը) ներկայացվող պա-
հանջները չափազանց խոշոր են և կարեւոր: Այն շինարարու-
թյունը, այն տեմպերը, այն խնդիրները, վոր իրագործում ենք
մենք և վորը դրել ենք մեր առաջ յերկրորդ հնգամյակում,
աներևակայելի, անհնարին, անկարելի յեն կապիտալիզմի պայ-
մաններում իսկ այդ խնդիրները պահանջում են ել ավելի
ուշադրություն դեպի տեսությունը, տեսության շաղկապը
պղակտիկայի հետ:

Կապիտալիստական աշխարհում ամեն մի տեխնիկական
նվաճում գաղտնի յեւ պահպան: բազմաթիվ գյուտեր թագցվում
են, հաճախ առանց վորեւ գործադրություն ունենալու: Այդպես
ե թելալըրում կապիտալիզմի անհաղթահարելի հակասություն-
ներից մեկը — կոնկուրենցիան: Գիտությունն ու տեխնիկան
արգելակվում են: Այլ ե դրությունը ԽՍՀՄ-ում, ուր գիտու-
թյունն ու տեխնիկան և մարդկային ստեղծագործական միաբն
ու յեռանդն ընդհանրապես գտնում են վոչ միայն արտա-
հայտվելու, զարգանալու լիակատար հնարավորություններ,
այլև մարմնավորվում են աներևակայելի չափերով ու տեմ-
պերով:

Քիմիան ԽՍՀՄ-ում խորհուրդների ծնունդն եւ Այժմ մենք
ունենք իրոք հզոր քիմիա, բայց ունենք և հակայական խնդիր-
ներ մեր առջև: Խորհրդային քիմիան պետք ե սերտ կերպով
շաղկապի տեսությունն ու պրակտիկան, կապակցի նաև քի-
միային հարակից գիտությունները — մաթեմատիկան, ֆիզիկան
և այլն: Յեվ չնայած այն բանին, վոր կատալիզիկ յերեւութ-
ների լուրջ, բազմակողմանի և ծավալուն ուսումնասիրությունը
նոր ե սկսվել մեզնում, բոլոր ավալները համոզում են մեզ,
վոր մոտակա ժամանակամիջոցում խորհրդային կատալիզը նո-
րանոր «հրաշքներ» պետք ե պարզի մեզ համար: Այդ ուղղու-
թյամբ ԽՍՀՄ-ում կատարվող լարված աշխատանքը, գործա-
դրվող նորագույն մեթոդները և սոցիալիստական աննախընթաց
շինարարությունը դաստատ գրավականներն են:

ԳԱԱ Շիմնարար Օխո. Գրադ.



FL0003247

ԳԻՒԾ 50 ԿՈՊ.

F 60

A II
23708

134.

В. АЗАТЯН
КАТАЛИТИЧЕСКИЕ ЯВЛЕНИЕ



АРМЕНГИЗ — ЭРИВАНЬ